

1063

208.2  
S-72

1913

2010

208.2  
Մ-66

Մ

## ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

«Գնացէք այսուհետեւ, աշակեր-  
տեցէք զամենայն հեթանոսս, մղբտե-  
ցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և  
Հոգւոյն Սրբոյ»:

(Մատթ. 28 գլ. 19 համար).

Լազմեց  
Արշակ բահանայ Մինասեանց  
Կրօնուսոյց Ներսիսեան և Յովանեան դպրոցների.

The

Թ. Ի Ֆ. Լ. Բ. Ս  
Տպարան Շեսպերանոս, Ելիզ. փողոց № 17  
1913

208.2  
V-72

ԱՐ

8  
16571-578  
(32393)  
1004

## ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

«Գնացէք այսուհետեւ, աշակեր-  
տեցէք զամենայն հեթանոսս, մկրտե-  
ցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և  
Հոգւոյն Արբոյ»:  
(Մատթ. 28 դլ. 19 հպմար).

Կազմեց  
Արշակ քահանայ Մինասեանց  
Կրօնուսոյց Ներսիսեան և Յովսանեան գողոցների.



12012

Թ. Ի Զ Լ Ի Ս  
Տպարան «Էլապերանո», Ելիզ. Փողոց № 17  
1913

463



2001

Որդիական խորին ակնածութեամբ  
նուիրում եմ Գերապատիւ հանգու-  
ցեալ Գարեգին Արք—Եպիսկոպոս Սա-  
թունեանի յիշատակին.

12012

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն Մ Ա. Ա.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԻ ՏԵՐԵԲՈՒԹՅՈՒՆ ԸՆԸՆԴԵԼՆԵՐԻ ՄԻ-  
ՉՈՑՈՎ:

ԱՐԱՋԻՆ ԾՐՁԱՆ.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ Ա. Ռ. Զ. Ի. Ն ՏԱՐԻՆԵՐԸ.  
ՊԵՏՐՈՍ Ա. Ռ. Ա. Ք. Ա. Լ. Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.

1) ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

(Մարկ. 16 զ. 2. Ղուկ. 24 Գործք. առաք. 1, 1—14).

ա) Յիսուսի վեղջին խօսքերը. Յիսուս Քրիս-  
տոս իւր յարութիւնից յետոյ՝ քառասուն օր  
գարձեալ մնաց աշխարհիս վրայ և շարու-  
նակ աշակերտներին երեալով՝ խօսեց Աս-  
տուծոյ արքայութեան մասին և նոցա պատուի-  
րեց երուսաղէմ քաղաքից չը հեռանալ, սպասել  
ո. Հոգու աւետիքին: «Յովհաննէս Մկրտիչը մը-  
կրտեց ջրով, իսկ դուք կարճ միջոցից յետոյ կը  
մկրտէք ո. Հոգով»: Այդ ժամանակ աշակերտ-  
ներն ասացին. «Տէր, այդ միջոցնեմն ես վերա-  
կանգնեցնելու իսրայէլի թագաւորութիւնը»: Յի-  
սուս պատասխանեց. «Զեր գործը չէ իմանալ

Հ Ր Ա. Մ Ա. Ն Ա. Ի

Տ. Տ. Գ. Ե Ո Ր Գ Ա Յ Յ Ե.

ԱՐԵՎԱԳԻՆԱԳՈՅՆ ԿԱԺՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՒՅ.

Հայ Մայիսի 1912 թ. Ա. Էջմիածին.

այդ բանը: Ա. Հոգին ձեզ վրայ գալով դուք դօ-  
րութիւն կը ստանաք և կը գնաք իմ մասին կը  
քարողէք Երուսաղէմում, բոլոր Հրէաստանում,  
Սամարիայում և աշխարհիս զանազան կողմերում»:

բ) Յիսուսի համբառնալը. Մի օր էլ երբ  
Յիսուս այսպէս խօսում էր իւր աշակերտ-  
ների հետ գնաց բարձրացաւ Զիթենեաց լեառը  
և ձեռքերը վերև բարձրացնելով օրհնեց նրանց:  
Այն ժամանակ մի ամպ եկաւ ծածկեց  
Յիսուսին և նա անհետացաւ աշակերտների աշ-  
քերից: Եւ երբ աշակերտներն այս բանը տեսան  
և զարմացած նայում էին դէպի երկինք, անա  
այդ միջոցին երկու մարդիկ սպիտակ շորերով  
երևացին նոցա ու ասացին. «Ով Գալելեացիներ,  
ի՞նչու էք կանգնել և զարմացած դէպի երկինքն  
էք նայում. այն Յիսուսը, որն երկինք բարձրա-  
ցաւ, նորից գալու է»:

Այս խօսքերից յետոյ Յիսուսի տասն և մի  
աշակերտները՝ Սիմօն-Պետրոսը, Յակովոսը,  
Յովհաննէսը, Անդրէասը, Փիլիպպոսը, Թովմա-  
սը, Բարդուղիմէոսը, Մատթէոսը, Յակովոսը Ալ-  
փեան, Սիմէօն (Շմաւովի) Նախանձայոյցն և Յու-  
դա Յակովեանը Զիթենեաց լեռից իջնելով վե-  
րադարձան Երուսաղէմ և բոլորէքեան միասին մի  
տան մէջ ապրելով աղօթում էին և անհամբեր  
սպասում ո. Հոգու գալուն:

«Երթամ պատրաստեմ ձեզ տեղի: Եւ  
եթէ Երթամ պատրաստեմ ձեզ տեղի գար-

ձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր  
եսն իցեմ և դուք անդ իցէք»: Յովհ. 14<sub>3</sub>.

«Բայց յորժամ եկեսցէ Միկթարիչն  
դոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ, զոգին ճշշ-  
մարտութեան, որ ի Հօրէ ելանէ, նա վկայես-  
ցէ վասն իմ»: Յովհ. 15<sub>26</sub>.

## 2) ՄԱՏԱԹԻԱՅԻ ՀՆՏՐՈՒԹԻՒՆԸ

(Պոլծք. առաք. 1, <sub>15—26</sub>).

ա) Պետրոս առաքեալի խօսքերը. Մի օր  
երբ հարիւր քսան հաւատացեալներ մի տեղ  
հաւաքուած էին, Պետրոս առաքեալն ասաց.  
«Արք Եղբարք, պէտք է կատարուի այն մար-  
գարէութիւնը, որն առաջուց ո. Հոգին ասել  
է Դաւիթ մարգարէի բերանով Յուղա Իսկարիով  
տացու մասին, որ «Նա կուրացած դրամից՝ Յի-  
սուսին պէտք է մատնի թշնամիների ձեռքը և  
անիրաւութեան վարձով մի ագարակ պէտք է  
ձեռք բերի, որը կոչուելու է «ազարակ արեան»:  
Սաղմոսաց գրքումն էլ գրուած է թէ Նրա տունը  
և բնակութիւնը պէտք է աւերակ դառնայ»: Արդ,  
այժմ ժամանակն է, որ մենք մեր միջի հաւա-  
տացեալներից մէկին, որին լաւ ենք ճանաչում,  
ընտրենք այն անձի տեղը, որն իր անարժան  
գործերի պատճառաւ մեղանից բոլորովին հեռա-  
ցաւ»:

բ) Մատաթիային ընտրում՝ են. Պետրոս  
առաքեալի այս խօսքերից յետոյ ներկայ Եղող

հաւատացեալներն իրանց միջից երկու մարդ  
ընտրեցին այն է՝ 1) Յովսէփին, որին Բարսաբա  
էին անուանում և յետոյ Յուստոս կոչուեցաւ  
և 2) Մատաթիային։ Աղօթք անելուց յետոյ այդ  
երկուսի մէջ վիճակ ձգեցին. ընտրուեց Մատա-  
թիան և դրանով լրացաւ տասն և երկու առա-  
քեալների թիւը։

### 3) Ա. ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

(Գործք. առաք. 2, 1—40).

ա) Հոգեզալստեան հրաշք. Յիսուսի համ-  
բարձումից տասն օր յետոյ, որ կոչւում  
էր Պէնտէկոստէ (նշանակում է Զատկից 50  
օր յետոյ) բոլոր աշակերտները միասին հա-  
ւաքուած ազօթում էին, յանկարծ երկնքից մի  
զօրեղ ձայն լսուեց և սաստիկ քամու նման  
լցուեց այն տունը, ուր նոքա նստած էին։ Ա.  
Հոգին կրակէ լեզուների նման իջաւ նոցա վրայ,  
շնորհք և զօրութիւն տուեց։ Առաքեալներն էլ  
ս. Հոգու շնորհքն ստանալով առանց երկիւղի  
սկսեցին զանազան լեզուներով խօսել և քարո-  
զել Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը։

Այդ ժամանակ հրէաների մեծ տօն լինելով,  
աշխարհիս զանազան կողմերից բարեպաշտ և եր-  
կիւղած հրէաներն եկել էին Երուսաղէմ ուխտի։  
Եւ երբ նոքա երկնքից եկող այդ զօրեղ ձայնը  
լսեցին, ամենքն էլ վազելով եկան առաքեալնե-  
րի մօտ և չափազանց զարմացան, երբ տեսան

որ բոլորեքեան զանազան լեզուներով են խօ-  
սում։ Այսպէս մէկը՝ պարսկերէն, միւսը մարե-  
բէն, երրորդն՝ արաբերէն, չորրորդն եգիպտա-  
կան լեզուով, հինգերորդը՝ հոռվմէական…։ Ներ-  
կայ եղողներն այս բաները տեսնելով զարմա-  
ցած միմեանց ասացին. «Այս ի՞նչ պէտք է լի-  
նի. չէ որ սոքա բոլորն էլ գալիլէացիներ էն և  
այդ ի՞նչպէս է, որ դոքա մեզ հասկանալի լե-  
զուներով են խօսում և պատմում Աստուծոյ մեծ  
գործերը»։ Ոմանք էլ ծաղրելով ասում էին. «Դո-  
քա բոլորեքեան հարբած են»։

բ) Պետրոս առաքեալի քարոզը հոգեզալստեան  
ժամանակ. Պետրոս առաքեալը, որ Յիսուսի տասն  
և երկու առաքեալներից մէկն էր և ազգու ու գե-  
ղեցիկ քարոզիչ, երբ հրէաների այդ կասկածելի  
ընթացքը տեսաւ, ասաց. «Ով իսրայէլացիներ,  
լաւ լսեցէք ասածներս. մենք հարբած չենք. այժմ  
դեռ առաւօտեան ժամի երեքն է (մեր հաշուով  
ժամի 9-ը) և ոչ մի մարդ այդ ժամին գինի չի  
խմի։ Այս Յիսուսը, որին Աստուծած աշխարհ ու-  
ղարկեց և որը ձեր մէջ անթիւ հրաշքներ գոր-  
ծելով ապացուցեց, որ ինքը մարգարէների գու-  
շակած ճշմարեր Մեսեան է, սակայն դուք նրան  
չը հաւատալով փայտի վրայ խաչեցիք, Աստուծած  
նրան յարութիւն տուեց և երբ նա երկինք համ-  
բարձաւ ս. Հոգին ուղարկեց մեզ վրայ և նա  
մեզ ոյժ, կարողութիւն և շնորհք տուեց»։ Ներ-  
կայ եղող ժողովուրդը Պետրոս առաքեալի այս

խօսքերը լսելով շատ դարմացաւ և հաւատաց Յիսուս Քրիստոսին։ Շատերն էլ դալով Պետրոսի և միւս առաքեալների մօտ ասում էին. «Եղբայրներ, ի՞նչ անենք, որ մենք էլ ու. Հոգու շընորհն ստանանք»։ Այն ժամանակ Պետրոս առաքեալն ասաց. «Ապաշխարեցէք, հաւատացէք աւտարանին և մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի անունով»։

գ) Առաջին քրիստոնեայ համայնքն Երուասիլում. Պետրոս առաքեալի այդ ազդու քարոզից յետոյ 3,000 հոգի զզջալով իրանց մեղքերը, եկան մկրտուեցին Յիսուսի անունով և վաճառելով իրանց կայքերն, ամեն բան հասարակաց դարձրին։ Այնուհետև նորահաւատացեալները չէին հեռանում տաճարից և շարունակ լսում էին առաքեալների քարոզները. և իրեւ մի ընտանիք, մի գերդաստան դարձած, բոլորեքեան միասին էին հաց ուտում, ապրում և աղօթում։ Նոցա մէջ իմ ու քո ասած բանը գոյութիւն չունէր և ամեն բան ընդհանրութեան էր պատկանում։ Հարուստ մարդիկ սիրով ծախում էին իրանց ունեցածները և նրանց արժէքով՝ դրամով հոգում էին թէ իրանց և թէ աղքատների պէտքերը։ Առաքեալների և բարեպաշտ հաւատացեալների աստուածահաճոյ այս գեղեցիկ գործերը տեսնելով ժողովուրդը, սիրում, յարգում էր նոցա և այլպիսով հաւատացեալների նորանոր խմբեր կազմուում։

«Ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս, նա մկրտեսցէ զձեզ հոգուվ սրբով և հրով»։ Ղուկ. 3<sub>16</sub>.

«Որ հաւատայ և մկրտեսցի կեցցէ և որ ոչն հաւատայ դատապարտեսցի»։ Մարկ. 16<sub>16</sub>.

«Եւ ես աղաչեցից զչայր և այլ Մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան»։ Յովհ. 14<sub>16</sub>.

#### 4. ՊԵՏՐՈՍ ԱՌԱԲԵԱԼԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՇԲԸ.

(Գործք առ. 3, 1—20).

ա) Ի ծնէ կաղի բժշկութիւնը. Մի անգամ Յիսուսի աշակերաններից Երկուսը՝ Պետրոսն ու Յովհաննէսը ժամի ինսին զնում էին տաճարն աղօթելու։ Այն ժամանակ Երուսաղէմի տաճարի այն դրան առաջ, որ կոչւում էր զեղեցիկ նստած էր ի ծնէ մի կաղ մարդ և անց ու դարձ անողներից ողորմութիւն էր լինդրում։ Սա տեսնելով Պետրոս և Յովհաննէս առաքեալներին ողորմութիւն լինդրեց. առաքեալները նրան նայելով ասացին. «Մեզ նայիր». Կաղը նրանց նայեց և յոյս ունէր մի բան ստանալ։ Այն ժամանակ Պետրոսն ասաց.

«Ես արծաթ և ոսկի չունեմ, որ քեզ տամ. բայց ինչ որ ունեմ, այն քեզ կ'տամ, Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով ասում եմ քեզ, վեր կաց և գնա», և բռնելով նրա աջ ձեռքից բարձրացրեց: Կաղն իսկոյն բժշկուեցաւ և առաքեալների հետ տաճար մտնելով աղօթեց և փառք տուեց Աստուծուն:

ը) Պետրոսի խօսակցութիւնը ժողովրդի հետ. Աղօթելուց յետոյ կաղը տաճարից դուրս եկաւ առաքեալների հետ և գնաց արտաքին գաւիթը, որ կոչւում էր Սողոմոնի սրահ: Այդ տեղ գտնուող ժողովուրդը տեսնելով իրանց ծանօթ կաղին առողջացած, հաւաքուեց նրա շուրջը և կասկածելի դիրք բռնեց: Պետրոս առաքեալն նրանց այդ վարմունքը տեսնելով ասաց. «Ով իսրայէլացիներ, ի՞նչու էք կասկածանքով մեզ նայում. կարծում էք, որ մենք մեր զօրութիւնով և կամ քաջութիւնով ենք արել, որ այս կաղը ման է գալիս. ոչ: Մեր պապերի՝ Աբրահամի, իսահակի և Յակովի Աստուծը փառաւորեց իր Որդի Յիսուս Քրիստոսին և ձեզ մօտ ուղարկեց, սակայն դուք նրան մատնեցիք և ուրացաք Պիղատոսի առաջ: Պիղատոսը քննելով նրան արդար գտաւ և կամեցաւ արձակել, բայց դուք այդ արդար սրբին ուրացաք և Պիղատոսին խնդրեցիք, որ նրա տեղը մի մահապարտի կեանք շնորհի, իսկ Յիսուսին ի խաչ հանի և այդ ձեռով դուք հասաք ձեր չար նպատակին և ձեր

կեանքի ճշմարիտ առաջնորդին սպանեցիք, բայց Աստուծած նրան յարութիւն տուաւ և մենք վկայ եղանք այդ բանին: Եւ այն հաւատը, որ դուք ունէիք դէպի Յիսուս Քրիստոսը, որ նա է Իսրայէլի Փրկիչը, Մեսիան, այսօր այդ ձեր ճանաչած կաղի բժշկութեամբ հաստատուեց: Գիտեմ Յիսուսին հասցրած ձեր չարութիւնները շատ անգիտութեամբ են կատարուել, բայց Աստուծած, որ առաջուց մարգարէների բերանով յայտնել էր թէ Յիսուսը պէտք է չարչարուի, խաչուի, թաղուի, բոլորն էլ կատարուեց: Ուրեմն որպէս զի ձեր գործած մեղքերը չնջուին, խոստովանուեցէք մաքուր սրտով, դարձի եկէք և հաւատացէք Աստուծոյ ճշմարիտ Որդի Յիսուս Քրիստոսին»:

„Ամենայն, որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես գնմանէ առաջի Հօր իմոյ, որ յերկինս է: Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես գնա առաջի Հօր իմոյ, որ յերկինսնէ“: Մատթ. 10<sub>32, 33.</sub>

## 5. ՀԱԼԱԾԱՆՔ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԴԷՄ

(Պոլծք առ. 4, 1<sup>—</sup>31<sup>•</sup>)

ա) Պետրոս ու Յովհաննէս առաքեալների բանդարկելլը. Պետրոս և Յովհաննէս առաքեալները դեռ իրանց խօսքերը չէին վերջացրել, որ վրահա-

սան քահանայապետները, տաճարի իշխանները և սաղուկեցիները։

Սոքա լսեցին թէ ինչպէս առաքեալները քարոզում էին մեռելներից յարութիւն առած Յիսուսի մասին, ուստի երկուսին էլ բռնեցին և մինչեւ առաւօտ բանդում պահեցին։ (Երեկոյ էր և դատել չէր կարելի)։ Առաքեալների քարոզի հետևանքն այն եղաւ, որ այդ օրը 5,000 հոգի հաւատալով Յիսուս Քրիստոսին քրիստոնեայ դարձան։

թ) Առաքեալները քարձրագոյն ատեանում։ Առաւօտեան ժողովրդեան ծերերը, տաճարի իշխանները, դպիրները և Աննա քահանայապետը ժողով կազմելով բանդարկուած առաքեալներին ատեան բերել տուին և սկսեցին հարցնել, թէ ուժ զօրութիւնով և կամ իշխանութիւնով այդ կաղին առողջացրին։

Այն ժամանակ Պետրոս առաքեալն ասաց. «Դուք ժողովրդի իշխաններ և Իսրայէլի ծերեր, այսօր մեզ մեղադրում էք միայն այն պատճառով, որ մենք մի հիւանդ մարդու բարիք անելով խաչուած և յարութիւն առած Յիսուս Քրիստոսի անունով բժշկեցինք։ Այն Յիսուսին, որին դուք խաչեցիք, Աստուած նրան յարութիւն տալով իր բոլոր արարածների վրայ գլուխ կարգեց և առանց նրան մարդս չի կարող փրկութեան գտնել»։

Հրէից իշխաններն ու մեծամեծները լսե-

լով Պետրոսի և Յովհաննէսի այս խորիմաստ ու համարձակ խօսքերը, զայրացան և միւնոյն ժամանակ զարմացան, որովհետև նոցա ճանաչում էին որպէս տգէտ և անուս մարդիկ, որոնք ամեն օր Յիսուսի հետ շրջում էին։

Միւս կողմից էլ տեսնելով բժշկուած կաղին իրանց մօտ կանգնած, ոչ մի խօսք չ'ասացին առաքեալներին, միայն հրամայեցին, որ ատեանից դուրս գնան։ Ատեանի անդամները խորհուրդ անելով ասացին. «Ի՞նչ անենք այս մարդկանցը. Երուսաղէմում ապրող բոլոր մարդիկն էլ գիտեն թէ սոքա ի՞նչպիսի հրաշք գործեցին. այդ բանը նոյն իսկ մենք էլ չենք կարող ուրանալ. և որպէս զի նրանց կատարած հրաշքի լուրը ժողովրդի մէջ աւելի չ'տարածուի, լաւ կ'լինի, որ մենք նրանց կանչենք և պատուէր տալով հրամայենք, որ Յիսուսի մասին այլ ևս ոչ մի խօսք չասեն»։

Այնուհետև դատաւորները ներս կանչեցին առաքեալներին ու խստիւ պատուիրեցին, որ այլ ևս Յիսուսի մասին ոչ մի տեղ չխօսեն և չքարոզեն։

Այս պատուէրից յետոյ Պետրոսը ու Յովհաննէսը պատասխանեցին. «Դուք ինքներդ դատեցէք. միթէ կարելի է Աստուծոյ պատուէրը թողնել և ձեր հրամանը կատարել. ոչ, մենք չենք կարող մեր տեսածը և կամ լսածը չքարոզել և չտարածել»։

Հրէից ծերելը և մեծամեծները տեսնելով թէ ինչպէս 40 տարեկան կաղը բժշկուեց, անկարող եղան առաքեալներին պատժել. ուստի ճարահատուած ստիպուած եղան նոցա արձակել: Առաքեալներն էլ գնացին իրանց ընկեր հաւատացեալների մօտ և ամեն բան պատմեցին նոցա: Հաւատացեալներն ուրախացած աղօթք անելով փառք տուին Աստծուն և խնդրեցին, որ իրանց ոյժ և կարողութիւն տայ Յիսուս Քրիստոսի կեանքն ու վարդապետութիւնն աւելի համարձակութեամբ քարոզելու և տարածելու:

«Ծնունդք իժից, զի արդ կարիցէք բարիս խօսել որ չարբդ էք. բանզի ՚ի յաւելուածոյ սրտի խօսի բերան»:

Մատթ. 12<sub>34</sub>.

«Եթէ Աստուած ի մեր կոյս է, ով իցէ մեր հակառակ»: Թուղթ առ Հոռվմ. 8<sub>31</sub>:

## 6. ԱՆԱՆԻԱ. ԵՒ ՍԱՓԻՐԱ.

(Դուրծք առ. 4<sub>32</sub>—37 5<sub>1</sub>—11).


Առաքեալների կազմած նորահաւատացեալքրիստոնեաները միասին ապրելով կազմեցին մի մեծ ընտանիք կամ համայնք, որոնք միասին աղօթում, ապրում և հաց էին ուտում: Նոցա մէջ իմ կամ քո ասած բանը գոյութիւն չունէր, այլ ամեն բան հասարակաց էր՝ այսինքն ընդհանուրին էր պատկանում: Հարուստները ծախում էին իրանց կայքը կամ ունեցածը և նրանց

արժէքը սիրով բերում և յանձնում էին առաքեալներին: Այսպէս օրինակ Յովսէփ անունով մի հաւատացեալ, որը յետոյ առաքեալ դառնալով Բառնաբոս անուանուեցաւ (նշանակում է միիթարութեան որդի), մի գիւղ ունէր. այդ գիւղը ծախեց և նրա ամբողջ գինը սիրով բերեց յանձնեց առաքեալներին:

Իսկ մի ուրիշ մարդ Անանիա անունով իւր Սափիրա կնոջ հետ ծախելով իւր ագարակը, կնոջ զիտութեամբ նրա գնի մի մասը պահեց իրա մօտ, իսկ միւս մասը տարաւ յանձնեց առաքեալներին: Պետրոս առաքեալն այդ բանն իմանալով ասաց նրան. «Անանիա, ի՞նչու գու սատանային լսեցիր ու Ս. Հոգուն խարեցիր և քո ծախած ագարակի գնի մի մասը քեզ մօտ պահեցիր. լաւ իմացիր, որ դու քո այդ ընթացքով ոչ թէ մի մարդու ես խարում, այլ Աստըծուն»:

Անանիան երբ այս խօսքերը լսեց, ստացաւ իւր արժանի պատիժը, վայր ընկաւ ու մեռաւ: Այս դէպքը հաւատացեալներին մեծ երկիւղի մէջ ձգեց. եկան ծառաները ու Անանիայի մարմինը տարան թաղեցին:

Այդ դէպքից մօտ երեք ժամ յետոյ առաքեալների մօտ եկաւ Անանիայի կին Սափիրան. սա դեռ չ'զիտէր թէ ի՞նչ է պատահել իւր ամուսնու հետ: Պետրոս առաքեալը նրան տեսնելով ասաց. «Սափիրա, ասա ինձ, ճշմարիտը,



որ դուք ձեր ագարակն այնքանով վաճառեցիք»:  
Սափիրան պատասխանեց. «Այս, այդքանով»:  
Այն ժամանակ Պետրոսն ասաց. «Ի՞նչու էք դուք  
երկուսով էլ Ս. Հոգուն փորձում. տես այն  
մարդկանց որոնք քո մարդուն տարան թաղեցին. հաստատ իմացիր, որ քեզ էլ այնտեղ կը-  
տանեն, կ'թաղեն»: Այս խօսքերից յետոյ Սա-  
փիրան յանկարծակի վայր ընկաւ, մեռաւ. նրան  
էլ տարան իւր ամուսնու մօտ թաղեցին:

Այս դէպքը մեծ երկիւղ ու ահ ձգեց բոլոր  
տեսնողների վրայ:

«Զի արմատ ամենայն չարհաց ար-  
ծաթսիրութիւն է»:

Ա. թուղթ Տիմոֆ. 6<sub>10</sub>:

«Աստուած հատուցանէ իւրաքանչիւր  
ըստ գործս իւրեանց»:

Թուղթ առ Հոռվմ. 2<sub>6</sub>:

## 7. ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆՈՒՄ.

(Գործք առ. 5.՝ 12—42):

ա) Ժողովրդի վերաբերմունքը. Քրիստոսի  
աշակերտներն օրէց օր իրանց մաքուր քարողու-  
թեամբ ժողովրդի մէջ զանազան հրաշքներ էին  
կատարում և հաւատացեալների խմբեր կազ-  
մում: Այդ խմբի մէջ մտնում էին շատ կա-  
նայք և մարդիկ. դոքա բոլորեքեան կազմում էին  
մի մաքուր միաբանութիւն, որի վերաբերմամբ

ժողովուրդը լաւ կարծիք ունէր: Ժողովրդից շա-  
տերն իրանց հիւանդները դրած պատգարակների  
վրայ բերում դնում էին այն ճանապարհների  
վրայ, որաեղից պէտք է անցնէր Պետրոս առա-  
քեալը, որպէսզի նրա շուաքն ընկնի հիւանդի  
վրայ և բժշկուի: Շատ հրէաներ այս հրաշքները  
տեսնելով հաւատում էին Յիսուսին և յարգում  
առաքեալներին:

բ) Քահանայապետների և իշխանների վերա-  
բերմունքը: Առաքեալների այս գործերը տեսնե-  
լով քահանայապետները և սադուկեցիները չա-  
փազանց նախանձեցին և չ'կարողանալով այլոս  
համբերել, չարութեամբ լցուած բռնեցին առա-  
քեալներին և տարան բանդը: Սակայն Աստու-  
ծոյ հրէշտակը գիշերը բանդի դռները բաց անե-  
լով ազատեց նրանց ու ասաց. «Գնացէք տա-  
ճարը և ժողովրդին քարոզեցէք Աստուծոյ խօս-  
քերը»: Առաքեալները լսելով հրէշտակին, առա-  
ւուածան գնացին տաճարը և սկսեցին ժողովր-  
դին քարոզել:

Առաւուած շատ վաղ քահանայապետը  
հրէից ծերերի հետ ատեան կազմելով մարդիկ  
ուղարկեց, որ առաքեալներին բանդից հանեն և  
ատեան բերեն: Սակայն երբ ծառաները բանդը  
գնալով այնտեղ ոչ մի մարդ չ'կտան, իսկոյն  
յետ դարձան և քահանայապետներին և տաճարի  
իշխաններին ասացին. «Մենք գնացինք բանդը  
և տեսանք բոլոր դռները վակէին և պահապան-

ներն ամենայն զգուշութեամբ հսկում էին դըռների մօտ ու երբ մենք բանդի դուռը բանալով ներս մտանք, ոչ մի մարդ չ'տեսանք այստեղ»։ Երբ քահանայապետները և տաճարի իշխանները այս խօսքերը լսեցին, շատ զարմացան և ասացին. «Սա ի՞նչ պէտք է լինի»։ Ահա այդ ժամանակ մի մարդ եկաւ և յայտնեց, նրանց. «Ես տեսայ ձեր բանդարկած մարդիկ տաճարում կանգնած քարոզում էին ժողովրդին»։ Հրէից իշխաններից մէկն խկոյն մի քանի սպասաւորների հետ գնաց տաճարը և առանց բռնութեան առաքեալներին ատեան բերեց (երկիւղ էին կրում ժողովրդից, որ կ'քարկոծեն իրանց)։

Այն ժամանակ քահանայապեաը դառնալով առաքեալներին ասաց. «Մենք ձեզ չ'պատուիրեցի՞նք, որ այլևս Յիսուս Քրիստոսի անուանով չ'քարոզէք. իսկ այժմ դուք ամբողջ Երուսաղէմը ձեր աղանդին էք դարձրել և ցանկանում էք իզուր տեղը մեզ յանցաւոր դուրս բերել որպէսզի այն մարդու արիւնը մեզ վրայ ձգէք»։

Պետրոս և միւս առաքեալներն այս խօսքերը լսելով պատասխանեցին. «Մարդս աւելի շուտ Աստծուն պէտք է լսի և հնազանդուի քան թէ մարդկանց. Մեր հայրերի Աստուածն իւր որդի Յիսուսին, որին դուք չարչարեցիք, խաչեցիք, յարութիւն տուեց ու իւր աստուածային փառքին արժանացրեց. Նրան առաջնորդ և փրկիչ

նշանակեց, որ հսրայէլին ապաշխարութիւն քարոզի և մեղքերի թողութիւն տայ. մենք այդ բանի կենդանի վկաններն ենք»։

Այս և սրա նման շատ խօսքերով առաքեալները հրէանների սխալ վարմունքները ու գործերը քննելով երեսներին տուին և խայտառակեցին. Նոքա էլ առաքեալների այս խօսքերից կատաղած որոշեցին բոլոր առաքեալներին սպանել:

զ) Գամաղիէլի կարծիքը. Այն տեղ դատաւորների մէջ մի փարիսեցի մարդ կար՝ Գամաղիէլ անունով, որը դպիր էր և մեծ յարդ ու պատիւ ունէր հրէանների մէջ. Նա պատուիրեց առաքեալներին մի փոքր ժամանակով դուրս տանել և ինքը դառնալով ներկայ եղողներին ասաց. «Դուք իսրայելացիներ, զգոյշ եղէք այդ մարդկանցից և նրանց ոչ մի վնաս մի տուէք, այլ արձակեցէք։ Եթէ նրանց քարոզութիւնը մարդկային է, ինքն իրան կ'ոչնչանայ, իսկ եթէ Աստուածանից է, հաստատ իմացէք, որ դուք ոչինչ չէք կարող անել։ Օրինակ, քիչ տուած Դկթաս անունով մի մարդ իւր քարոզութեամբ չորս հարիւր մարդու գլխից հանելով իւր կողմը դարձրեց, սակայն յետոյ նրա այդ կողմնակիցներն երկպառակութեան մէջ ընկնելով ցիրուցան եղան վերջացան. Նոյն ընթացքով զնաց Յուղա Գալիլեացին. Բաւականին ժողովրդի ապստամբացը նելով ոտքի կանգնացրեց և իր յետեկից տարաւ.

կան պէտքերը հոգալ, ուստի տրտունջներ եղան,  
որ առաքեալները Պաղեստինում ապրող աղքատ  
հրէայ հաւատացեալների վրայ աւելի ուշադրու-  
թիւն են դարձնում քան դրսից եկող հելլենա-  
խօս աղքատ հրէաների վրայ:

Այդ պատճառաւ մի օր 12 առաքեալներն  
հաւատացեալներին ժողովի հրաւիրելով ասացին.  
«Մեզ վայել չէ, որ Աստուծոյ խօսքը թողած հա-  
ցի սեղանին ծառայենք. աւելի լաւ է, եղբայր-  
ներ, ձեր միջից ընտրեցէք եօթն արժանաւոր  
մարդիկ, որոնք Ս. Հոգու իմաստութեամբ լըց-  
ուած լինեն, և թող նոքա աղքատների սեղանի  
հոգսը քաշեն, իսկ մենք աղօթենք և քարոզենք»:

Առաքեալների այս առաջարկութիւնը բոլոր  
հաւատացեալները սիրով ընդունեցին և իրանց  
միջից ընտրեցին եօթը վկայուած մարդկանց,  
որոնք են՝ 1) Ստեփանոսին, որը Ս. Հոգով լըց-  
ուած մարդ էր, 2) Փիլիպպոսին, 3) Պըռքորո-  
նին, 4) Նիկանովը, 5) Տիմովնին, 6) Պարմե-  
նային 7) Անտիոքացի նորահաւատ Նիկողայո-  
սին: Սոցա կանգնացրին առաքեալների առաջ,  
որոնք աղօթելով և ձեռները դնելով նրանց գլու-  
ներին, իրաւունք տուին հոգ տանել հաւատա-  
ցեալների վրայ: Այս բանից յետոյ Յիսուսի հե-  
տեւ հաւատացեալների թիւը աւելացաւ Երուսա-  
լէմում. նոյնիսկ քահանաներից շատերը հաւատա-  
ցին, որ Յիսուսն իրանց մարդարէների գուշա-  
կած «Մեսիան» է եղել:

բայց քիչ ժամանակից յետոյ բոլորն էլ թողին  
նրան և ցիր ու ցան լինելով ոչնչացան»:

Դամադիէլի այդ խօսքերին ամենքը հաւա-  
նութիւն տուին. ուստի առաքեալներին յետ  
կանչելով ծեծեցին և մինոյն ժամանակ պատ-  
ուիրեցին, որ Յիսուս Քրիստոսի անունով այլեւ  
չխօսեն, չքարոզեն և ապա բոլորին ազատ ար-  
ձակեցին:

Առաքեալներն ատեանից դուրս գալով ու-  
րախացան, որ իրանք Յիսուսի պատճառով ա-  
նարդանք կրեցին և այնուհետև սկսեցին աներ-  
կիւղ ամեն տեղ՝ թէ տներում և թէ տաճարում  
քարոզել և ուսուցանել Յիսուս Քրիստոսի մա-  
սին:

«Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի հոգայցէք թէ  
որպէս կամ զինչ խօսիցիք. զի առացի ձեզ ի ժամուն  
յայնմիկ զինչ խօսիցիք: Զի հչ եթէ դուք իցէք, որ  
խօսիցիքն, այլ չոգին չօր ձերոյ, որ խօսիցի ի ձեզ»:

Մարտ. 10<sub>19</sub>, 20<sup>+</sup>

## 8. ԵՕԹԸ ՍԱՐԿԱՒՄԳՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

(Գործք առ. 6<sub>1</sub>—8):

Աղքատաց հոգաբարձութիւն, Քանի որ հա-  
ւատացեալների թիւը սակաւ էր, նոցա բոլոր  
պէտքերը հոգում էին իրանք առաքեալները.  
բայց երբ որ նոցա թիւը շատացաւ, այն ժա-  
մանակ առաքեալներն անկարող եղան բոլորի  
վրայ կանոնաւոր ուշք դարձնել և նոցանիւթա-

9. Ա. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՔԱՐՈԶԸ ԵՒ ՄԱՐՏԻՐՈ-  
ՍԱԿԱՆ ՄԱՀՀՅ.

(Գործը առ. 6<sub>8—15</sub> 7<sub>51—59</sub>):

Հաւատացեալների ընտրած եօթը սարկաւագ-  
ների մէջ ամենից զլսաւորը, ջերմեռանդը, բա-  
րին և հասկացողը համարւում էր Ա. Ստեփան-  
ոսը: Սա իւր ընդունակութիւններով և շնորհա-  
լի ձիրքերով աչքի էր ընկնում և իւր ազդուու  
գեղեցիկ քարոզներով ու վիճաբանութիւններով  
պապանձեցնում էր իւր թշնամի հրէաներին,  
որոնք չար նախանձից դրդուած վիճում էին  
նրա հետ:

Ա. Ստեփանոսի հակառակորդները չկարո-  
ղանալով մի առ մի պատասխանել այն բոլոր  
հարցերին, որոնք առաջարկւում էին Ստեփան-  
ոսի կողմից, սկսեցին զրպարտել և սուտ լու-  
րեր տարածել, որպէս թէ իրանք լսեցին, որ նա  
հայնոյանքով էր խօսում Աստուծու և Մովսէս  
մարգարէի դէմ: Զրպարտողները բռնեցին Ա.  
Ստեփանոսին, տարան քահանայապետի մօտ և  
երկու սուտ վկաներ էլ բերին իրանց հետ, որոնք  
ատեանում ասացին. «Մենք լսեցինք, որ այս  
մարդը քարոզում էր թէ Յիսուս նազովեցին  
երուսաղէմի տաճարը պէտք է քանդի և Մով-  
սիսի տուած օրէնքները փոխէ»: Այն ժամանակ  
քահանայապետը հարցրեց Ա. Ստեփանոսին.  
«Արդեօք, այն ինչոր քո մասին ասում են ձիշտ

ՀՆ»: Ա. Ստեփանոսն առանց երկիւղի գեղեցիկ  
և շնորհալի խօսքերով ցոյց տուեց, որ իւր քա-  
րոզածները Յիսուս Քրիստոսի մասին միանգա-  
մայն ձիշտ են և իրաւացի ու հրէաների խս-  
տասրտութիւնն երեսներին տալով ասաց. «Դուք  
խստապարանոցներ, սրտով և ականջով չթլփա-  
տուածներ, դուք էլ ձեր նախնիների նմա Ա.  
Հոգուն հակառակում էք: Զեր հայրերը չէին, որ  
մարգարէներին հալածեցին ու սպանեցին. և  
այդ մարգարէներն էին, որոնք առաջուց ձեր  
պապերին յայտնեցին իրանց մարգարէութիւն-  
ների մէջ արդար Յիսուսի մասին, բայց դուք  
փոխանակ նրան հաւատալու, չարչարեցիք, մատ-  
նեցիք և վերջն էլ սպանեցիք»:

Հրէաներն այս խօսքերը լսելով սաստիկ  
գայրացան, իսկ Ա. Ստեփանոսը նայելով դէպի  
երկինքն Աստուծոյ փառքը տեսաւ և ասաց.  
«Ահա տեսնում եմ երկինքը բացուած և Մար-  
դու Որդին Հայր Աստուծոյ աջ կողմը կանգ-  
նած»: Այս խօսքերից հրէաները կատաղած յար-  
ձակուեցան Ա. Ստեփանոսի վրայ ու քաղաքից  
դուրս տանելով սկսեցին քարկոծել:

Ա. Ստեփանոսի քարկոծմանը ներկայ էր  
Սաւուղ անունով մի հրէայ, որն այն աստիճան  
թշնամի էր քրիստոնեայ հաւատացեալներին, որ  
նախավկայինահատակողների վերարկուները պա-  
հում էր, որպէս զի նոքա աւելի ազատ կերպով  
քարկոծեն:

Քարկոծման ժամանակ Ս. Ստեփանոսն առանց վրդովուելու հանգիստ սրտով ասաց «Տէր, Յիսուս, առ իմ հոգին». իսկ հոգին աւանդելու ժամանակ քարձրածայն աղաղակեց. «Տէր, սրանց արածը մեղք մի համարիր», և հոգին աւանդեց:

«Ես հաւատարիմ մինչև ի մահ և տաց քեզ զպսակն կենաց». Յովհ. յայտ. 2<sub>10</sub>.

«Օրհնեցէք դհալածիչս ձեր. օրհնեցէք և մի՛ անիծանէք»: Թուղթ առ Հոռվմ. 12<sub>14</sub>.

#### 10. ՓիլիՊՊՈՍԸ ԵՒ ԵԹՈՎՊԱՅԻ ՆԵՐՔԻՆԻՆ.

(Գործք առ. 8<sub>1-8</sub>, 26<sub>-40</sub>).

ա) Հալածանք ընդում քրիստոնեաների. Ս. Ստեփանոսի նահատակութիւնից յետոյ հրէայ ամբոխը կատաղած վերադառնալով Երուսաղէմ մեծ հալածանք սկսեց հաւատացեալ քրիստոնեաների դէմ. մտնում էին աղօթատները և բոնի ոյժով ցըռում էին նոցա և անից տուն մանդալով այր մարդկանց և կանանց բոնելով բանդարկում էին: Հալածանքն այնքան խստացրին, որ Երուսաղէմում գանուող բոլոր հաւատացեալ քրիստոնեաները բացի առաքեալներից ստիպուած եղան հրէաների երկիւղից փախչել Հրէաստանի և Սամարիայի կողմերը: Հրէայ ամբոխի կատաղութիւնն այն աստիճանի զօրեղ էր, որ նոյնիսկ հաւատացեալ քրիստոնեաները չ'վստահացան

Ս. Ստեփանոսի մարմինը վերցնել, տանել ու թաղել: Այդ բանը յանձն առան կատարելու Երուսաղէմում ապրող մի քանի ազնիւ և բարեպաշտ հրէաներ, որոնք շատ լաւ ճանաչում էին Ս. Ստեփանոսին:

ը) Փիլիպպոսի քարոզութիւնը. Ահա այդ ժամանակներն էր, որ Եօթն ընտրուած սարկաւագներից մէկը՝ Փիլիպպոսն եկաւ Սամարիայի քաղաքներից մէկում և քարոզելով Յիսուսի մասին շատ անդամալոյծների և կաղերի բժշկեց:

Այդ միջոցին տիրոջ հրեշտակն երևեցաւ Փիլիպպոսին և ասաց. «Գնա Երուսաղէմից դէպի Գաղա տանող ճանապարհի վրայ, ուր անապատ է, այնտեղ քարոզիր»: Փիլիպպոսն իսկոյն վեր կացաւ և գնաց. ճանապարհին տեսաւ Եթովպացի մի մարդու, որն Եթովպացի կանդակա թագուհու ներքինին էր և միենոյն ժամամակ նրա գանձապետը: Սա գնացել էր Երուսաղէմ ուխտի և կառքով տուն էր վերադառնում: Նա կառքի մէջ նստած կարդում էր Եսայի մարգարէի գիրքը: Փիլիպպոսն այդ բանը տեսնելով հարցրեց նրան. «Արգեօք կարդացածդ հասկանում ես»:

Ներքինին պատասխանեց. «Ի՞նչպէս կարող եմ հասկանալ, մինչև որ մէկն ինձ չ'բացատրէ»: և իննդեց Փիլիպպոսին, որ բարձրանայ կառքը և նստի իւր կողքին:

Ներքինու կարդացածը Եսայի մարգարէի այն խօսքերն էին, որոնք վերաբերում էին Յի-

սուս Քրիստոսին: «Ոչխարի պէս մորթելու տարան, գառան նման բուրդը խուզողի առաջ բերանը բաց չ'արեց և ոչ մի ձայն չ'հանեց»: Ներքինին հարցրեց Փիլիպպոսին. «Արդեօք մարդարէն այդ խօսքեցն ունի համար է ասել, իրաթէ ուրիշի»: Փիլիպպոսն այս դէսքից օգտուելով սկսեց քարոզել Յիսուսի մասին և աշխատեց ներքինուն քրիստոնէական հաւատի բերել.

գ) Ներքինին մկրտում է. Այսպէս նոքաիրանց ճանապարհը շարունակելով հասան մի ջրի ափին, ուր ներքինին ասաց. «Ահա ջուր, ի՞նչն է արդելում ինձ, որ ես մկրտուեմ»: Փիլիպպոսը պատասխանեց. «Եթէ սրտով հաւատում ես Յիսուս Քրիստոսին, կարող ես մկրտուել»: Ներքինին ասաց Փիլիպպոսին. «Այս, ես հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստուծոյ Որդին է»: Փիլիպպոսը հրամայեց, որ կառքը կանգնի և երկուսն էլ իջան ջրի ափը, և ներքինուն մկրտեց. Այսուհետեւ ներքինին ուրախ սրտով շարունակեց իւր ճանապարհը, իսկ Փիլիպպոսը նրանից բաժանուելով գնաց Ազովոսի կողմերը և ամեն տեղ շրջելով քարոզում էր Քրիստոսի աւետարանը:

«Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանս յաւիտենականս. և նոքին իսկ են, որ վկայեն վասն իմ, որովք համարիք ունել կեանս»: Յովհ. 5<sup>39</sup>.

«Իսկ զիամրդ կարդասցեն՝ յոր ոչն հա-

ւատացին, զիարդ հաւատասցեն որում ոչն լուան, կամ զիամրդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ կամ զիամրդ քարոզեսցեն՝ եթէ ոչ առաքեսցին»:

Թուղթ առ Հոռվմ. 10<sub>14—15</sub>.

### 11. ՊՕՂՈՍԻ ԴԱԲՉԸՆ.

(Գործք առ. 8<sub>1—3</sub> 9<sub>1—31</sub>):

ա) Սաւուղը Դամնակոսի ծանապարհին. Ս. Ստեփանոս Նախավկայի նահատակութեան ժամանակ ներկայ էր Տարսոնացի Սաւուղը. սա որքան որ հաւատարիմ էր Մովսիսական օրէնքին և պաշտում էր ամբողջ սրտով, նոյնքան ատում էր Քրիստոսի աշակերտներին և ամեն կերպ աշխատում էր նոցա հալածել: Սա իշխանութեան պաշտօնեաների հետ մտնում էր հաւատացեալների տները և կանանց ու տղամարդկանց բռնելով բանդարկել էր տալիս: Նա դրանով չբաւականացաւ. և երբ իմացաւ, որ հաւատացեալների մեծ մասը փախել են Դամասկոս քաղաքը, գնաց քահանայապետի մօտ և նրանից հրաման առնելով ուղևորուեց Դամակոս, որպէսզի այն տեղի քրիստոնեաներին կապած բերի երուսաղէմ: Սակայն երբ նա Դամասկոս քաղաքին մօտեցաւ, յանկարծ երկնքից մի լոյս փայլատակեց: Սաւուղն երկիւղից գետնի վրայ ընկաւ և երկնքից մի ձայն եկաւ, որ ասում էր. «Սաւուղ, Սաւուղ, ի՞նչու ես ինձ հալածում»:

Սաւուղն ասաց. «Տէր, ով ես դու»: Տէրն ասաց. «Ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես. դժուար է քեզ խթանին քացի տալ»: Սաւուղը վախեցած դողդողալով ասաց. «Տէր, ի՞նչ ես կամենում, որ ես անեմ»: Տէրը պատասխանեց. «Վէր կաց և գնա Դամասկոս քաղաքը ու այն տեղ կ'ասեմ քեզ թէ ի՞նչ պէտք է անես»: Սաւուղի հետ եկած մարդիկն ապշած կանգնած էին. ձայնը լսում էին բայց ոչինչ չէին տեսնում և չէին իմանում թէ ով է խօսողը: Սաւուղը կուրացած ընկած տեղից վերկացաւ և հետը եկող մարդիկը նրա ձեռքից բոնած տարան Դամասկոս: Այդ դէպքն այնքան խորը տպաւորութիւն թողեց Սաւուղի վրայ, որ նա մի քանի օր շաբունակ ոչ կարողանոմ էր մարդկանց տեսնել, ոչ հաց ուտել և ոչ էլ ջուր խմել:

Ը) Սաւուղը և Անանիան Դամասկոսում: Այդ ժամանակ Դամասկոսում ապրում էր Յիսուսի աշակերտներից մէկն՝ Անանիա անունով:  
Աստուած տեսելքում նրան երևալով ասաց. «Անանիա», Անանիան պատասխանեց «Այստեղ եմ Տէր». Ասաուած ասաց նրան. «Վէր կաց և գնա այն փողոցը, որ Ուղիղէ կոչւում. այն տեղ Յուղայի տանն ապրում է Տարսոնացի Սաւուղը և տես նա զեռ աղօթնում է. ձեռքդ նրա գըլին դիր, որ նա կարողանայ կրկին տեսնել»:  
Անանիան Սաւուղի անունը լսելով սարսափած ասաց. «Տէր, այդ մարդու մասին շատերից

լսել եմ, որ երուսաղէմում շատ չարիքներ է հասցըել հաւատացեալներին. այժմս էլ քահանայապետից իրաւունք ստանալով եկել է Դամասկոս, որ Քեզ հաւատացողներին բռնի և կապած երուսաղէմ ուղարկի»: Այն ժամանակ Աստուած ասաց Անանիային. «Գնա նրա մօտ. մի վախենար, ես այն մարդուն արդէն ընտրել եմ, որ զնայ և իմ անունը քարոզի հրէաների և հեթանուների մէջ. նա ինձ համար շատ չարչարանքներ և նեղութիւններ պէտք է կրի: Անանիան իսկոյն վերկացաւ գնաց գտաւ այն տունը ուր ապրում էր Սաւուղը և ձեռքը նրա զլիխն կնելով ասաց. «Սաւուղ եղբայր, վերև նայիր. այն Յիսուսը, որ քեզ Դամասկոսի ճանապարհին երեաց, նա ինձ ուղարկեց քեզ մօտ յայտնելու, որ քո փակուած աչքերը նորից կ'բացուեն և դու Ա. Հոգւով կ'լցուես»: Այս խօսքերից յետոյ Սաւուղի աշքերը բացուեցին և մկրտուելով քրիստոնեայ դարձաւ:

«Եւ մեք հաւատացաք և ծանեաք եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ»:

Յուղ. 6<sub>70</sub>:

«Աստուած զամենայն մարդիկ կամի զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեցին»:

Ա. Թ. Տիմոթ. 2<sub>4</sub>:

12. ՍԱՀՈՒՂԲ ԴԱՄԱՍԿՈՍՈՒԻՄ ԵՒ ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ.

(Գործք առ. 9<sub>20</sub>—31):

Սաւուղը մկրտուելուց յետոյ մտաւ հաւատացեալների մէջ և սկսեց քարոզել Յիսուսի մասին, որ նա է ճշմարիտ Մեսիան և Սատուծոյ Որդին և ով որ լսում էր կամ տեսնում էր նրան, զարմացած ասում էր. «Սա այն մարդը չէ, որ Երուսաղէմում հալածում էր Քրիստոսի հաւատացեալներին և նոյն իսկ այդ նպատակով էլ քահանայապետից հրաման առաւ, որ գայ այստեղ և հաւատացեալներին բռնելով կապած ուղարկէ Երուսաղէմ»:

Հրէաները տեսնելով, որ Սաւուղն օրէց օր աւելի զօրանալով իւր նոր հաւատի մէջ և մեծ եռանդով քարոզում է, որ Քրիստոսը մարգարէների գուշակած Մեսիան է, ուստի կատաղեցին նրա դէմ և քաղաքի դռների մօտ պահապաններ նշանակեցին, որպէսզի գիշեր ցերեկ հսկեն — և բռնեն նրան: Հրէաների այս չար միտքն իմանալով հաւատացեալները գիշերով Սաւուղին դրին զամբիւղի մէջ և քաղաքի պարսպից կախելով իջեցրին ու փախցրին, տարան Երուսաղէմ:

Սաւուղն Երուսաղէմ գնալով ցանկացաւ մտնել այստեղի Քրիստոնեայ հաւատացեալների խմբի մէջ, սակայն նոքա առաջին անգամ Եր-

կեւղ կրելով չ'հաւատացին, որ նա Յիսուսի աշակերտ է գարձել. բայց երբ Բառնաբառը նրան առաքեալների մօտ բերելով մանրամասն պատմեց, թէ ինչպէս Յիսուս Քրիստոսը Դամասկոսի ճանապարհին Երևալով նրան հետը խօսել է և թէ ինչպէս նա Դամասկոսում Քրիստոսին հաւատալով համարձակ քարոզել է Յիսուսի մասին, ահա այն ժամանակ միայն հաւատացին և Սաւուղին ընդունեցին իրանց մէջ:

Սաւուղն Երուսաղէմումն էլ սկսեց ազատօրէն քարոզել Յիսուսի մասին և վիճաբանել հրէաների հետ:

Սաւուղի հետ այդ տեղ էլ նոյնը պատահեցինչ որ Դամասկոսում։ Հրէաները լսելով նրա ազգու և ոգեորուած քարոզները ու կարծիքները Յիսուսի մասին, կատաղեցին և մտադրուեցան նրան սպանել, սակայն հաւատացեալներն այդ բանն իմանալով աշխատեցին նրան գիշերով փախցնել կեսարիայի վրայով դէպի Տարսոն քաղաքը։

Սաւուղի դարձով Քրիստոնէական եկեղեցին սկսեց մի փոքր ազատ շունչ քաշել և խաղաղութիւն վայելել թէ ամբողջ Հրէաստանում, թէ Սամարիայում և թէ Փալլիայում։

«Զի եկն Որդի մարդոյ կեցուցանել զը-  
կորուսեալն»։ Մատթ. 18<sub>11</sub>:

«Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն  
իւր դնէ ի վերայ ոչխարաց»։ 10<sub>11</sub>:

## 13. ԿՈՌՆԵԼԻՈՍ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԸ.

(Գործք առ. 10<sub>1</sub>—48):

ա) Կոռնելիոս հարիւրապետը եւ Աստուծոյ հրեշտակը. Պաղեստինէի կեսարիա քաղաքում ապրում էր Իտալացի կոչուած գնդի մի հարիւրապետ՝ Կոռնելիոս անունով, որը թէև հրէայ չէր այլ կուապաշտ, բայց մի ազնիւ, բարեպաշտ և Աստուծավախ մարդ լինելով ամենայն ժամանակ աղօթք էր անում և աղքատներին օգնում, ողորմութիւն տալիս։ Մի անգամ էլ երբ առաւօտեան ժամի 9-ին աղօթք էր անում, Աստուծոյ հրեշտակն երեւցաւ նրան և ասաց. «Կոռնելին»։ Կոռնելիոսն էլ հրեշտակին տեսնելով վախեցած ասաց. «Ի՞նչ է Տէր»։ Հրեշտակն ասաց. «Քո աղօթքը և տուած ողորմութիւնն Աստուծուն ընդունելի եղաւ. մարդ ուղարկիր Յոպպէ քաղաքը և կանչել տուր Սիմօն Պետրոս կոչուած առաքեալին, որը հիւրէ մի կաշեգործ Սիմօնի մօտ, որի տունը ծովի մօտն է. նա կ'գայ և քեզ կ'ասի թէ ի՞նչ պէտք է անես»։

բ) Կոռնելիոսը կանչում է Պետրոսին. Հրեշտակի խօսքերից յետոյ Կոռնելիոսն իսկոյն կանչեց իւր ծառաներից երկուսին և ուղարկեց Յոպպէ քաղաքը Պետրոս առաքեալին կանչելու։

Հետևեալ օրն երբ այդ մարդիկն Յոպպէ քաղաքին մօտեցան, այդ ժամանակ Պետրոս առաքեալը տան կտուրը բարձրացած աղօթում էր։

Ճաշի ժամանակ էր. առաքեալը քաղց զգալով կամենում էր ճաշել. յանկարծ տեսաւ երկինքը բացուեց և այնտեղից չորս ծայրերից բռնած մի կտաւ իջաւ իւր առաջը։ Այդ կտաւի մէջ կային ամեն տեսակ չորքոտանի կենդանիներ, սողուններ, երկնքի թռչուններ և գագաններ։ Այդ ժամանակ երկնքից մի ձայն լսուեց, որ ասում էր. «Պետրոս, վեր կաց, մորթիր և կեր»։ Պետրոսն ասաց. «Քաւ լիցի, Տէր, ես երբէք պիղծ բան չեմ կերել»։ դարձեալ երկրորդ անգամ ձայն լսուեց, որ ասում էր. «Աստուծոյ սրբած բանը պիղծ մի համարիր»։

Այս խօսքերն երեք անգամ կըկնուելուց յետոյ կտաւը բարձրացաւ երկինք։ Պետրոս առաքեալը զարմացած մտածում էր թէ ինչ է նշանակում այդ տեսիլը և ահա հէնց այդ ժամին կոռնելիոս հարիւրապետի ուղարկած մարդիկը կաշեգործ Սիմօնի տունը փնտուելով կանգնեցին դրան մօտ և հարցրին. «Սիմօն—Պետրոս կոչուածն այստեղ է հիւր եկել»։ Այդ ըսպէին Ս. Հոգին երեւալով Պետրոսին ասաց. «Ահա երեք մարդիկ քեզ որոնում են. նրանց ես եմ ուղարկել քեզ մօտ և ոչ մի բանի վրայ մի կասկածիր»։ Պետրոսը կտութից ցած իջնելով ասաց կոռնելիոսի ուղարկած մարդկանց. «Ես այն մարդն եմ, որին դուք որոնում էք. ի՞նչ էք կամենում»։ Սպասաւորներն ասացին. «Մեր կոռնելիոս հարիւրապետը մի աստուծավախ, ար-

դար մարդ է և հրէաների մէջ յայտնի է որպէս  
մի ազնիւ և բարի անձն. հրեշտակից հրաման  
ստացաւ, որ քեզ իւր մօտը կանչէ և դու նրան  
պէտք է ասես թէ ի՞նչ պէտք է անի, որ փըր-  
կուի»: Պետրոս առաքեալն այդ սպասաւորներին  
ներս հրաւիրելով հիւրասիրեց և հետևեալ օրը  
մի քանի մարդկանց հետ ճանապարհ ընկաւ դէ-  
պի կեսարիա:

գ) Պետրոսը քարոզում է Կոռնելիոսին և  
մշկուում: Կոռնելիոս հարիւրապետն իմանալով  
Պետրոս առաքեալի գալը, հրաւիրեց իւր պղպա-  
կաններին, բարեկամներին և սպասեց նրան. և  
երբ առաքեալը ներս մտաւ նրա տունը, Կոռնե-  
լիոսն առաջ գալով ընկաւ նրա ոտներն և եր-  
կրպագութիւն տուեց: Այն ժամանակ Պետրոս  
առաքեալը նրա ձեռքից բռնելով կանգնացրեց  
և ասաց. «Վէր կաց, ես էլ քեզ նման մի մարդ  
եմ. գիտես, որ հրէաների օրէնքին հակառակ է  
օտար ազգերի մօտ գնալ և նրանց հետ խառ-  
նուել. բայց Աստուած ինձ տեսիլքով յայտնեց,  
որ այսուհետեւ ազգերի մէջ այդ խարութիւնը  
չ'պէտք է լինի. դրա համար էլ եկել եմ քեզ  
մօտ. այժմ ասա, ի՞նչու ես ինձ կանչել»: Կոռ-  
նելիոսը պատասխանեց. «Մրանից չորս օր առաջ  
ժամի 9-ին աղօթք էի անում, սպիտակ զգես-  
տով մի մարդ կանգնեց առաջս և ասաց»: Կոռ-  
նելիոս, քո աղօթքը և տուած ողորմութիւնն Աս-  
տծուն ընդունելի եղաւ. մարդ ուղարկիր Յոպ-

պէ և կանչել տուր Սիմօն Պետրոսին, որը կա-  
շուեգործ Սիմօնի տանը հիւր է. նա կ'գայ և  
քեզ կ'սովորեցնի թէ ի՞նչ պէտք է անես»: «Ես  
էլ իսկոյն մարդ ուղարկեցի քեզ մօտ և դու լաւ  
ես արել, որ եկել ես. և ահա մենք բոլորս քո-  
առաջը կանգնած ցանկանում ենք Աստուծոյ  
պատուէրները լսել»:

Այն ժամանակ Պետրոս առաքեալն ասաց.  
«Աստուած մարդկանց անձնաւորութեանը չի  
նայում, այլ ովոր երկիւղած է և արդար գոր-  
ծեր է կատարում, նա է Աստուծոյ առաջ ըն-  
դունելի համարւում: Դուք գիտէք, որ Աստուած  
խաղաղութիւն քարոզեց Յիսուս Քրիստոսի ձեռ-  
քով. գիտէք նոյն պէս թէ ի՞նչ պատահեց Հրէ-  
աստանում, և թէ ինչպէս Աստուած Նազարէթցի  
Յիսուսին օծեց Ս. Հոգւով և մենք վկայ ենք  
այն բոլորին ինչոր Յիսուս գործեց Հրէաստա-  
նում և Երուսաղէմում. սակայն դուք նրան չ'ը-  
հաւատալով հանդերձ չարչարեցիք, տանջեցիք,  
և փայտից կախելով սպանեցիք, բայց նա երեք  
օրից յետոյ յարութիւն առաւ և նա յայտնի ե-  
ղաւ ոչ թէ միայն ժողովրդին, այլ և մեզ աս-  
տուածանից ընտրուած վկաներիս: Մենք նրա  
հետ կերանք, խմեցինք. նա մեզ պատուիրեց  
ժողովրդին քարոզել և վկայել, որ Յիսուսն Աս-  
տուծոյ որդին է և կենդանիների ու մեռեների  
գատաւորը: Բացի այդ բոլոր մարդարէները վը-

կայում են, որ Յիսուսին հաւատացողն իւր մեղքերից կ'ազատուի»:

Պետրոս առաքեալը դեռ իւր խօսքերը չէր վերջացրել, որ Ս. Հոգին եղաւ այդ տեղ գտնուող բոլոր ունկնդիրների վրայ։ Պետրոսի հետ եկող վեց հոգի հաւատացեալները շատ զարմացան, որ Ս. Հոգու պարզեց հեթանոսներին էլ շնորհեց և նոքա իրանց աչքերովը տեսան և ականջներովը լսեցին թէ ինչպէս Կոռնելիոսը և նրա մօտ հաւաքուած այլազգները (հեթանոս) իրանց բերանով փառաբանում էին Աստուծուն։

Ներկայ եղողներից շատերը հաւատացին Յիսուսին և նրա անունով մկրտուեցին. իսկ Պետրոս առաքեալին էլ ինդրեցին, որ մի քանի օր մնայ իրանց մօտ։

«Որ հաւատայ և մկրտեսցի, կեցցէ. և որ ոչն հաւատայ, դատապարտեսցի»։

Մարկ. 16<sub>16</sub>.

«Եւ ասէր Յիսուս առ հրէայսն հաւատացեալս. Եթէ դուք կացջիք ի բանին իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. և ծանիջիք զճշմարտութիւնն և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեղ»։ Յովհ. 8<sub>31</sub>, 32։

#### 14. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՅՆԻՒԹԻՆ ԱՆՏԻԲՈՒՄ.

(Գործք առաք. 11 գլ):

Այն առաքեալներն և հաւատացեալները որոնք չըրէաստանի զանազան կողմերումն էին

գտնուում, երբ լսեցին, որ հեթանոսներն էլ Աստուծոյ ճշմարիտ խօսքերը լսեցին և հաւատացեալ դարձան, շատ ուրախացան։

Եւ երբ Պետրոս առաքեալը կեսարիայից Երուսաղէմ վերադարձաւ, թլպատութեան հետեւող հրէաները սկսեցին վիճել նրա հետ և ասել որ նա անթլպատ մարդկանց հետ ընկեր դառնալով ման է գալիս նրանց հետ և հաց ուտում։ Պետրոսը լաւ հասկանալով նոցա չար միտքը և նոցա մէջ եղած անտեղի կասկածները փարատելու համար, ստիպուած եղաւ մանրամասն պատմել այն դէպքը, որը պատահեց նրա հետ Յոպակէ և կեսարիա քաղաքներում։ Այն ժամանակ նրա հակառակորդները լսեցին և փառաբանեցին Աստուծուն, որ հեթանոսներին ևս կեանքի փրկութիւն ուղարկեց։

Ս. Ստեփանոսի մահուանից յետոյ հաւատացեալներից շատերը հրէաների երկիւղից ստիպուած եղան այս ու այն կողմը փախչել. նրանցից ոմանք էլ փախան գնացին մինչև Փիւնիկէ, կիպրոս և Ասորական Անդիոք քաղաքը, ուր Քրիստոսի աւետարանը քարոզելով հրէաների և յոյնների մէջ հաւատացեալների նորանոր խմբեր կազմեցին։ Այս լուրը երբ Երուսաղէմ հասաւ, հաւատացեալներն իսկոյն Բառնաբաս առաքեալին ուղարկեցին Անտիոք։ Եւ երբ Բառնաբասն Անտիոք եկաւ և տեսաւ Աստուծոյ շնորհը, շատ ուրախացաւ և սկսեց մեծ եռանդով քարոզել

որպէսզի հաւատացեալներն հոգւով սրտով միանան միմիանց հետ և այդպիսով օրէց օր նորագարձ հաւատացեալների թիւը շատացաւ:

Բառնաբասն այդ տեղքարոզի մեծ կարիքն ի նկատի առնելով գնաց Տարսոն քաղաքը Սաւուղին որոնելու և երբ նրան գտաւ, խսկոյն նրա հետը վերադարձաւ Անդիոք և երկումն էլ միամին մի ամբողջ տարի քարողեցին Աստուծոյ խօսքը: Շատերը հաւատացեալ դարձան և նոցանուանեցին քրիստոնեայ:

«Զբարելարութիւն և չհաղորդութիւն  
մի մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի Աստուծո»:

Թ. առ Եբրայեց. 13<sub>16</sub>:

### 15. ՅԱԿՈՎՔՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԱՀԸ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ.

(Գործք առաք. 12 գլ.):

Հերովդէս թագաւորը ինկատի ունենալով այն հանգամանքը, որ քրիստոնէութիւնը շատ յաջողութեամբ տարածւում է, նախանձով լըցուած աշխատեց քրիստոնէական եկեղեցու անդամներից մի քանիսին ծանր չարչարանքներ տալով տանջել, որպէս զի իրանից երկիւդ կըեն և այդպիսով թուլանան իրանց գործունէութեան մէջ: Ահա այդ չար գիտաւորութեամբ նա սրով սպանել տուեց Յովհաննէս առաքեալի եղբայր

Յակովոսին և երբ նկատեց, որ այդ բանը հրէաներին շատ գուր եկաւ, խրախուսուելով բռնեց Պետրոս առաքեալին, ձգեց բանդը և յանձնեց զինուորներին խիստ հսկողութեան տակ պահել, որպէսզի Զատկից յետոյ բերէ և ցոյց տայ ժողովրդին:

Սակայն Աստուծոյ հրեշտակը գիշեր ժամանակ բանդում երևալով Պետրոսին ասաց. «Վեր կաց, գօտիդ կապիր, հողաթափներդ հագիր և ինձ հետեւիր»: Պետրոս առաքեալը կատարեց հրեշտակի հրամանը. բանդից դուրս եկաւ գնաց Յովհաննէս Մարկոս անուանուած առաքեալի տունը:

«Փրկութիւն արդարոց ի Տիառնէ է,  
վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան: Օգնեսցէ նոցա Տէր և փրկեսցէ զընուա...»:

Գիրք Սաղմոսաց 36<sub>39</sub>, 40<sup>2</sup>

## II U. U.

ՔՐԻՍՏՈՆԵՈՎԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ԸՆԴՇՐՋԵԿՈՒՆԵԼ ՀԵԹԱՆՈՍ ԱԹԽԲ-  
ՀՈՒՄ ԵՒ ՊՈՂՈՍ ԸՆԴՔԵԸԼԻ ԳԼԽԵՄՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ:

### ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ.

**16. ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՌԱԶԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԸ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՄԵՋ:**

(Գործք առաք. 13<sub>1</sub>—<sub>52</sub>).

ա) Անտիոքի քրիստոնեաների զլիատրները.  
Ասորական Անտիոքի քրիստոնեայ հաւատացեալ-  
ների մէջ կային մի քանի մարգարէներ և ա-  
ռաջնորդներ այսպէս օրինակ՝ Բառնաբասը, Նի-  
գէր կոչուած Սիմէօնը, Ղուկիոս Կիլենացին:  
Հերովդէս չորրդապետի դայեկորդի Մանայէնը  
և Սաւուլ—Պողոս կոչուածը: Մի օր երբ նոքա-  
բոլորեքեան միասին աղօթում էին Ս. Հոգին  
երեաց և ասաց. «Ընտրեցէք Բառնաբասին և Սա-  
ւուլին այն գործի համար, ինչի համար ես հրա-  
ւերել եմ. այն է՝ գնալ հեթանոսների մէջ քա-  
րողելու»:

Մենքը ծոմ պահելով աղօթք արին և ձեռ-  
ները գնելով Բառնաբասի և Սաւուլի գլխին,  
արձակեցին:

Բառնաբաս և Սաւուլ առաքեալները գնա-  
ցին Սելևկիա քաղաքը և այստեղ նաւ նստելով  
գնացին կիպրոս կղզու գլխաւոր քաղաքը՝ Սու-  
ղամինա: Դոցա հետն էր, որպէս թարգման,  
հոգվմէական լեզուին լաւ տեղեակ Յովհաննէս՝  
Մարկոս մականուանեալը:

բ) Առաքեալները Պափոս քաղաքում. Սաղա-  
մինա քաղաքում առաքեալները մտան հրէից  
ժողովրդանոցը և սկսեցին քարոզել խաչուած  
Յիսուս Քրիստոսի մասին և ապա շրջելով ամ-  
բողջ կղզին, եկան Պափոս կոչուած քաղաքը,  
ուր ապրում էր մի կախարդ սուտ մարգարէ՝  
Բարեյեսու անունով:

Սա իւր խաքեբայական միջոցներով աշխա-  
տում էր այդ տեղի բգեշխի փոխանորդ Սերգի  
Պաւղոսին հաւատափոխ անել, որին Սաւուլն  
արդէն քրիստոնեայ էր դարձել և ի պատիւ այդ  
իշխանի՝ իւր անունը փոխելով անուանում է  
Պաւղոս կամ Պողոս:

Պողոս առաքեալն իմանալով այդ կախարդի  
չար միտքը, յանդիմանեց նրան և ասաց. «Ով  
խաքեբայ և սատանայի որդի, դու շարունակ հե-  
տամուտ ես լինում Սաւուլու ուղիղ ճանապարհը  
ծռելու. դու Սաւուլոյ պատժից չես կարող  
փախչել. կոյք կ'դառնաս և մի ժամանակ արեմի

լոյսը չես տեսնի՞ւ։ Այդ պէս էլ եղաւ. նա կուրացաւ և մարդ էր որոնում, որ ձեռքից բռնի և իրան առաջնորդ է։ Սերգի Պաւղոս իշխանն երբայս հրաշքը տեսաւ, աւելի ամրացաւ իւր հաւատի մէջ։

զ) Պօղոս առաքեալը Յունական Անդիոքում. Պօղոս առաքեալն իւր խմբով Պափոս քաղաքից նաւ նստեց և գնաց Պամփիլիայի Պերգէ քաղաքը, որպէս զի փոքր Ասիայի հրէաններին քարոզէ Քրիստոսի աւետարանը։ Այստեղ Յովհաննէս Մարկոսը բաժանուելով նրանցից, վերադարձաւ Երուսաղէմ, իսկ Բառնաբասը և Պօղոսը Պերգէից անցան Պիսիդիայի Անդիոք քաղաքը, ուր Պօղոսը շաբաթ օրը մտաւ հրէից սինագոգը քարոզելու։ Այն ժամանակ ժողովրդապետները մարդ ուղարկեցին Պօղոսի մօտ և ասացին. «Եթէ ժողովրդին խրատելու և միսիթարելու համար էք քարոզելու, խօսեցէք»։

Պօղոս առաքեալը իրաւունք ստանալով բարձրացաւ ամբիոնի վրայ և ձեռքով նշան արեց ժողովրդին, որ չհեռանայ և սկսեց խօսել. «Ո՞վ իսրայէլացիներ, դուք, որ Աստուածանից վախենում էք, լսեցէք իմ խօսքերը։ Աստուած բոլոր ազգերի միջից ձեզ ընտրեց իբրև իրա սեպահական ժողովուրդ. դուք երկար ժամանակ Եգիպտոսում որպէս պանդուխտ ապրեցիք։ Նա ձեզ այն տեղ բազմացրեց, պաշտպանեց և այնտեղից դուրս բերելով ձեզ ազատեց փարաւոնների ձեռ-

քից։ Քառասուն տարի ձեզ անապատում՝ պահեց, կերակրեց և ապա Յեսու Նավայի ձեռքով ձեզ Քանան տանելով այնտեղի եօթն ազգերին ոչնչացրեց և նոցա երկիրը ձեզ տուեց, որպէս ժառանգութիւն։ Յեսուից յետոյ, 450 տարի դատաւորների ձեռքով ձեզ կառավարեց մինչև Սամուէլ մարգարէն։ Այնուհետեւ թագաւորներ խընդրեցիք. Աստուած լսելով ձեր խնդիրը Բենիամինի ցեղից Կիսի որդի Սաւուղին թագաւոր նշանակեց, որը մօտ 40 տարի ձեզ կառավարեց և վերջը Սաւուղին փոխելով, նրա տեղը նշանակեց Յեսսէի որդի Դաւթին. սրա ցեղից էլ ձեզ համար մի փրկիչ ուղարկեց, որ ձեզ քարոզի և փրկութեան հրաւիրի։ Եկաւ Յիսուսը, քարոզեց և դուք փոխանակ նրան լսելու, և հաւատալու, ընդհակառակը բռնելով նրան չարչարեցիք և յետոյ դիմեցիք Պիղատոսին, որ մահուան պատժի ենթարկէ նրան։ Վերջը փայտի վրայ խաչեցիք և գերեզմանի մէջ դրիք. սակայն Աստուած նըրան յարութիւն տուեց և շատերին երևեցաւ։ Արդ, նկ եղայըներ, նա մեզ մեղաց թողութիւն էր քարոզում. եթէ այժմ հաւատաք Յիսուս Քրիստոսին, կարողէք արդարանալ»։

Պօղոս առաքեալի քարոզն այնքան լաւ աղդեց ներկայ եղողների վրայ, որ ունկնդիրներից շատերը եկան և խնդրեցին, որ միւս շաբաթ օրն էլ նոյն բանը քարոզի։

Հետեւեալ շաբաթ օրը համարեա ամբողջ քա-

զաքի ժողովուրդը հաւաքուեց սինագողը կրկին  
լսելու Աստուծոյ խօսքը:

Հրէից մեծերն երբ հաւաքուած ժողովրդի  
ահագին մեծ բազմութիւնը տեսան, նախանձով  
լցուած սկսեցին Պողոսի հետ հակաճառել և  
նոյնիսկ հայհոյել:

Այն ժամանակ Պողոսն ու Բառնաբասն ա-  
ռանց երկիւղ կրելու համարձակ կերպով պա-  
տասխանեցին նրանց և ասացին. «Աստուծոյ  
խօսքն առաջ ձեզ պէտք է քարոզուէր, բայց  
որովհետեւ դուք մերժեցիք և անարժան դարձրիք  
ձեզ յաւիտենական կեանքի համար, այդ պատ-  
ճառաւ այժմ հեթանոսներին ենք քարոզում:

Աստուած մեզ այսպէս է պատուիրել և ա-  
սել. — Ձեզ հեթանոսների համար լոյս եմ նշանա-  
կել. դուք պէտք է գնաք աշխարհիս բոլոր կող-  
մերը և ամենքին անխտիր փրկութիւն քարո-  
զէք»:

Հեթանոսները այս խօսքերը լսելով ուրա-  
խացան, հաւատացին Յիսուսին և փառք տուին  
Աստուծուն, իսկ հրէաները դժգոհ մնալով, մի  
քանի աստուածապաշտ պարկեշտ կանանց և քա-  
ղաքի գլխաւորներին գրգռեցին Պողոսի ու Բառ-  
նաբասի դէմ և միահամուռ ոյժով առաքեալնե-  
րին իրանց սահմաններից արտաքսեցին: Առա-

քեալներն էլ իրանց ոտքի փոշին թափ տալով  
Անդիոքից հեռացան, գնացին Իկոնիա քաղաքը:

«Երանի այնոցիկ. որ լսեն զբանն Աս-  
տուծոյ և առնեն»:

Դռւկ. 11<sub>28</sub>.

17) ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՋ ԱՌԱՔԵԼԱ-  
ԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ.

(Գործք առ. 14<sub>1</sub>—<sub>27</sub>):

ա) Պողոսն իկոնիայում. Պողոս և Բառնա-  
բաս առաքեալներն Իկոնիա հասնելուց մի քա-  
նի օր յետոյ մտան ժողովարանը և սկսեցին քա-  
րոզել ժողովրդին. քարոզի հետևանքն այն եղաւ,  
որ բաւականին հրէաներ և յոյներ քրիստոնեայ  
դարձան: Քրիստոսին չ'հաւատացող հրէաները  
գրգռեցին հեթանոսներին առաքեալների դէմ և  
այդպիսով կազմուեցաւ մի զօրեղ կուսակցու-  
թիւն: Ժողովուրդը երկու մասի բաժանուեց. մի  
մասն առաքեալների քարոզներն հաւատալով նո-  
ցա պաշտպանում էր, իսկ միւս կողմը ընդհա-  
կառակն ամեն միջոց գործ գրեց վնասելու և  
բանն այն տեղ հասաւ, որ չ'հաւատացող հրէա-  
ներն ու հեթանոսներն իրանց իշխանների հետ  
յարձակուեցան առաքեալների վրայ և կամեցան  
քարկոծել: Առաքեալներն իմանալով իրանց հա-  
կառակորդների չար միտքը, իսկոյն թողին Իկո-  
նիան և գնացին Լիւստրա քաղաքը:

ը) Պօղոսը Լիւստրայում. Լիւստրայում իծնէ մի կաղ մարդ էր ապրում. սա ամեն ժամանակ գնում էր Պօղոս առաքեալի մօտ և սիրով լսում էր նրա քարոզութիւնները։ Պօղոս առաքեալլ նկատելով, որ այդ կաղի մէջ հաւատ կայ, մի օր կուապաշտների առաջ բարձր ձայնով ասաց. «Քեզ եմ ասում, Յիսուս Քրիստոսի անունով վեր կաց և ման եկ»։ Ի ծնէ կաղն իսկոյն բժըշտ կուեցաւ և վերկենալով ման եկաւ,

Կուապաշտները այս հրաշքը տեսնելով այնպէս կարծեցին, որ Պօղոսն ու Բառնաբասն իրանց աստուածներն են, ուստի զարմացած ասացին. «Աստուածները մարդու կերպարանք աշխած երկնքից մեզ մօտ են իջել»։

Բառնաբասին Դիոս (Խւպիտեր) աստուծոյ տեղն էին ընդունում, իսկ Պօղոսին Հերմէսի (Մերկուր):

Դիոսի քուրմը ժողովրդին հաւաքելով վազեց, որ եզներ և պսակներ բերէ և առաքեալների առաջ զոհ մատուցանէ։ Երբ այս բանը տեսան Պօղոսն ու Բառնաբասը ասացին. «Մարդիկ, այդ ի՞նչ էք անում. մենք ևս ձեզ նման մահկանացուներ ենք և եկել ենք ձեզ քարոզելու, որպէսզի դուք թողնէք կեղծ աստուածներին և դառնաք դէպի այն կենդանի Աստուածը, որը ստեղծել է երկինքը, երկիրը, ծովը և ամենայն ինչ։ Այս ասելով առաքեալները հազիւ

հազ կարողացան ժողովրդին արգելել, որ զոհ չ'անէ։

Անտիոքի և Իկոնիայի հրէաներն երբ իմացան որ առաքեալներն իրանց քարոզներով մեծ յաջութեան մէջ են և շատերին քրիստոնեայ են դարձրել, հաւաքուեցին եկան Լիւստրա և այն տեղի ժողովրդին համոզեցին, որ Պօղոսին և Բառնաբասին հեռացնեն իրանց քաղաքից։

Կատաղած ժողովուրդը յարձակուեց առաքեալների վրայ և քիչ մնաց, որ Պօղոսին քարկոծելով սպանէր. սակայն նա փախաւ, մտաւ քաղաք և հետևեալ օրը Բառնաբասի հետ գնաց Դերբէ։ Այստեղ նոքա մի առժամանակ մնալով քարոզեցին Քրիստոսի աւետարանը և շատերին քրիստոնեայ դարձրին և ապա կրկին յետ դարձան Լիւստրա, Իկոնիա և Անտիոք քաղաքները, ուորից յորդորեցին հաւատացեալներին չ'թուլանալ իրանց հաւատի մէջ և ամեն մի քրիստոնեայ համայնքի համար երէցներ, առաջնորդներ ձեռնադրելով պատուիրեցին նոցա աչալուրջ ոգով կառավարել իրանց հօտը։

Այնուհետև առաքեալներն ամբողջ Պիսիդիայի մէջ շրջելուց յետոյ եկան Պամփիւլիայի Պերգէ քաղաքը, ուր կրկին քարոզելուց յետոյ գնացին Ատալիա։ Այդ տեղից նաւ նստելով կիպրոս կղզու հիւսիսային կողմից կարճ ճանապարհով վերադարձան ասորական Անտիոք քաղաքը և հաւատացեալ քրիստոնեաներին պատմեցին թէ

ինչպէս Աստուած իրանց օգնեց և իրանք կարողացան հեթանոսների մէջ քրիստոնէական կրօնը տարածել:

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշ-  
խարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի  
ամենայն, որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ,  
այլ ընկալցի զկեանսն յաւիտենական».

Յովհ. 3<sub>16</sub>.

«Որ ընդունի զՈրդին, ընդունի և  
զկեանս և որ ոչ ընդունի զՈրդին Աստուածոյ  
և ոչ զկեանս ընդունի»:

Ա. Թուղթ Յովհ. 5<sub>12</sub>.

«Հաւատամ ի Տէր Յիսուս Քրիստոս և  
ապրեցես դու և ամենայն տուն քո»:

Գործք առ. 16<sub>31</sub>.

#### 18. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՐԱՋԻՆ ԺՈՂՈՎՆ ԵՐՈՒՍԱ- ՂԵՄՈՒՄ:

(Գործք առ. 15<sub>1</sub>—35).

Երբ Պօղոսն ու Բառնաբասը վերադարձան  
ասորական Անտիոք քաղաքը, այդ ժամանակ նը-  
կատեցին, որ հաւատացեալ քրիստոնէաների մէջ  
մի խնդիր զօրեղ վիճարանութեան նիւթէր դար-  
ձել: Հրէութիւնից քրիստոնէայ դարձածներից  
ոմանք ասում էին հեթանոսութիւնից քրիստո-  
նեայ դարձածներին. «Մինչև, որ Մովսիսի օրէնքը

քի համաձայն չ'թլփատուէք, չէք կարող փրկուել»:  
Պօղոսն ու Բառնաբասը այս բանն իմանալով ա-  
մեն կերպ աշխատեցին, որ այդ վիճարանու-  
թեանը վերջ տան, սակայն այդ բանը նրանց  
չ'յաջողուեց: Այդ ժամանակ նոքա ժողովրդին  
առաջարկեցին իրանց միջից ընտրել մի քանի  
մարդու, որոնք իրանց հետ գնան Երուսաղէմ և  
այդ խնդիրը գնեն բոլոր առաքեալների առաջ և  
նրանցից վերջնական լուծումն սպասեն: Առա-  
քեալների այդ առաջարկութիւնը քրիստոնեայ  
համայնքը սիրով ընդունեց և իրա միջից մի  
քանի մարդիկ ընտրելով Պօղոսի և Բառնաբասի  
հետ ճանապարհ ձգեց դէպի Երուսաղէմ: Դոքա  
անցան Փիւնիկէի և Սամարիայի վրայով և այն  
տեղի քրիստոնեաներին պատմեցին թէ ինչպէս  
հեթանոսներից շատերը քրիստոնէայ դարձան:  
Այս տեղեկութեան վրայ ամենքն էլ ուրախա-  
ցան:

Երբ Պօղոսն ու Բառնաբասն Երուսաղէմ հա-  
սան, այն տեղի առաքեալները շատ սիրով ըն-  
դունեցին նրանց: Եւ յիշեալ վէճը յարուցանող  
խնդիր առթիւ առաքեալներից և երէցներից 50  
թուին մի ժողով կազմուեց: Այդ ժողովում փա-  
րիսեցի հաւատացեալներից ոմանք պնդում էին,  
թէ հեթանոսութիւնից քրիստոնէայ դարձածնե-  
րին պէտք է անպատճառ թլպատել և պատուի-  
րել, որ Մովսիսի օրէնքը պահեն: Ահա այս խըն-  
դրի շուրջը երկար վիճարանութիւն եղան և ա-

մեն մի կողմն իւր կարծիքն էր պաշտպանում։  
Այն ժամանակ Պետրոս առաքեալն ասաց՝  
«Եղբայրներ, ձեզ լաւ յայտնի է, որ սրանից մի  
քանի տարի առաջ Աստուած որոշեց իմ բերա-  
նով յայտնել հեթանոսներին աւետարանի խօսքը  
և այդպիսով ոչ մի խարութիւն չ'դրեց մեր և  
նրանց մէջ։ Ուրեմն եթէ Աստուած խարութիւն չի  
դրել, մենք էլ իրաւունք չունենք նրանցից մի  
նոր բան պահանջելու։ Այնուհետև Պօղոսն ու  
Բառնաբասը պաշտպանելով Պետրոսի կարծիքը  
պատմեցին թէ Աստուած ինչպիսի նշաններ և  
հրաշքներ գործեց իրանց ձեռքով հեթանոսների  
մէջ։ Այն ժամանակ ժողովի նախագահ՝ Յա-  
կովը առաքեալն այդ խնդրին մի որոշում տա-  
լու համար ասաց. «Ո՛վ եղբայրներ, ինձ լսեցէք.  
Սիմօն Պետրոսը պատմեց թէ ինչպէս, Աստուած  
առաջուց այց արաւ հեթանոսներին, որպէսզի  
նրանցից իւր համար ժողովուրդ կազմէ. ուստի  
ես էլ յարմար եմ համարում հեթանոսութիւնից  
քրիստոնեայ դարձածներին չ'նեղացնել ու այդ-  
պիսով նորանոր դժուարութիւններ չ'յարուցանել,  
այլ թուղթ գրել նրանց և պատուիրել, որ հե-  
ռու մնան կռապաշտական սովորութիւններից և  
պաշտամունքներից։»

Յակովը առաքեալի այս որոշումն ամենքն էլ  
հաւանեցին և առաքելական ժողովը որոշեց իրան-  
ցից ևս մի քանի արժանահաւատ մարդիկ ընտրել, ո-  
րոնք Պօղոսի ու Բառնաբասի հետ գնան Անտիո-

և իրանց վճիռը յայտնեն այնտեղի քրիստոնեայ  
համայնքին։ Առաքելական ժողովն ընտրեց Բար-  
սաբա անունով մէկին, որ Յուղա էր կոչւում և  
Շիղային, որն երուսաղէմի քրիստոնեաներից  
շատ սիրուած և յարգուած մարդ էր։

Բայց որովհետև Անտիոքի ժողովուրդը խօ-  
սում էր յունացին լեզուով, ուստի հասկանալի  
լինելու համար, որոշուեց թուղթն այդ լեզուով  
գրել և Յակովը առաքեալն էլ որպէս ժողովի  
նախագահ՝ ստորագրեց։ Ահա այդ թղթի պատ-  
ճէնը. «Առաքեալներից ու երեցներից ողջոյն  
Անտիոքի հեթանոսութիւնից դէպի քրիստոնէու-  
թիւն գարձած մեր քրիստոնեայ եղբայրներին։  
Մենք լսեցինք, որ հրէաստանից մի քանի մար-  
դիկ առանց մեր գիտութեան ինքնագլուխ ձեզ  
մօտ գալով ձեր մաքերը խառնել են քարոզելով,  
որ հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձող-  
ները պէտք է թլփատուեն և Մովսիսի օրէնք-  
ները պահեն։ Դուք այդ խնդիրը պարզելու հա-  
մար մեզ մօտ էիք ուղարկել Պօղոսին, Բառնա-  
բասին և մի քանի ուրիշ մարդկանց որպէս պատ-  
գամաւորներ։ Այդ մասին ժողով կայացաւ և ո-  
րոշուեց ժողովի վճիռը ձեզ գրաւոր յայտնել և  
միևնույն որոշումը բերանացի ձեզ հաղորդելու  
համար որոշեցինք Պօղոսի և Բառնաբասի հետ  
ուղարկել մի քանի ընտրուած մարդիկ այն է՝  
Յուղային ու Շիղային, որոնք իրանց անձը նուի-  
րել են Յիսուս Քրիստոսի համար։» Առաքեալ-

ների կողմից ընտրուած մարդիկը Պօղոսի և  
Բառնաբասի հետ որոշ յանձնաբարութեամբ գնա-  
ցին Անդիոք, քրիստոնեայ բոլոր հաւատացեալ-  
ներին ժողովելով, առաքելական թուղթը կարդա-  
ցին. ամենքն ուրախացան առաքելական ժողովի  
այդ արդար որոշման համար: Յուղան յետ գար-  
ձաւ երուսաղէմ, իսկ Շիղան մնաց այնտեղ:

**19. ՊՕՂՈՍԻ Ա.Խ.ՔԵԼԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՃԱՆԱ-  
ՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՄԷջ.**

(Գործք առ. 15<sub>35</sub>—<sub>41</sub> 16 գլ.):

ա) Պօղոսի եւ Բառնաբասի անհամաձայնու-  
թիւնը. Պօղոս և Բառնաբաս առաքեալները մի  
ամբողջ տարի մնացին ասորական Անտիոքում և  
այդքան ժամանակամիջոցում շարունակ քարո-  
զում էին ժողովրդին Յիսուս Քրիստոսի աւե-  
տարանը:

Յիսուս և մէկ թուին Պօղոսն ասաց Բառ-  
նաբասին. «Գնանք, այցելնք այն քաղաքներն,  
ուր քարոզել ենք Քրիստոսի աւետարանը և տես-  
նենք թէ Քրիստոնեայ հաւատացեալներն ի՞նչ վիճա-  
կի մէջ են»: Բառնաբասը ցանկացաւ իւր աղ-  
դական Յովհաննէս — Մարկոս մականուանեալին  
ևս հետը տանել, սակայն Պօղոսը հակառակուեց  
ասելով. «Երբ նա մի անգամ Պամփիլիայում  
մեզանից բաժանուեց, այժմ այլս կարիք չկայ,  
որ նա մեղ հետ գայ»: Այս խօսակցութիւնից

յետոյ անհամաձայնութիւն առաջացաւ Պօղոսի  
և Բառնաբասի մէջ և նոքա բաժանուեցին մի-  
մեանցից: Բառնաբասը Մարկոսին հետն առաւ  
գնաց կիպրոս կղզին, իսկ Պօղոսը Շիղայի հետ  
ցամաքային ճանապարհով Դեբբէ քաղաքի վրայ-  
ով անցաւ մի քաղաքից դէպի միւսը, այցելեց  
Քրիստոնեայ հաւատացեալներին և իւր ազգու  
քարոզներով նոցա աւելի ամբապնդեց իրանց  
հաւատի մէջ:

բ) Պօղոսը ընտրում է Տիմոթէոսին որպէս,  
ուղեկից եղնկեր: Երբ Պօղոսը Լիւստրա եկաւ, այն  
տեղ մի հաւատացեալի պատահեց, որի մայրը  
հրէայ Քրիստոնեայ էր, իսկ հայրը յոյն հեթա-  
նոս: Այդ հաւատացեալ մարդու անունն էր Տի-  
մոթէոս, որը մի բարի, ազնիւ անձն էր և լաւ  
անուն ունէր թէ Լիւստրայի և թէ Իկոնիայի  
Քրիստոնեաների մէջ: Պօղոսը սրա արժանաւո-  
րութիւնները տեսնելով քարոզեց Քրիստոնէական  
կրօնը և Քրիստոնեայ դարձնելով վերցրեց իւր  
հետը: Սոքա որ քաղաքը, որ մտնում էին յոր-  
դորում էին այն տեղի Քրիստոնեաներին՝ պահել  
այն բոլոր որոշումները, որոնք հաստատուած են  
Երուսաղէմում առաքեալներից և երէցներից:  
Վերջը դոքա գնացին Փոխւղիս և ապա այն տե-  
ղից մտան Գաղատացւոց Երկիրը. բայց ոչ մի  
տեղ չ'քարոզեցին, որովհետև Ս. Հոգին արգելել  
էր Աստուծոյ խօսքերն այդ կողմերը քարոզե-  
լու: Առաքեալներն այդ տեղից եկան Միւսիայի

կողմերը և փորձեցին գնալ Բիւթանիա և այն տեղ քարոզել. սակայն այն տեղ ևս իրաւունք չ'տրուեց քարոզելու։ Այսուհետև Միւսիայից նոքա գնացին Տրովադա քաղաքը։ Այստեղ Պօղոսին տեսիլքում մի մակեդոնացի երկաց, որն ասում էր. «Ե՛կ, Մակեդոնիա և օգնիր մեզ փըրկելու մեր ոգիները»։ Պօղոսն այս տեսիլքը պատմեց իւր ուղեկիցներին և որոշեցին շուտով գընալ Մակեդոնիա և քարոզել Տիրոջ մասին։ Տրովադայից նոքա ուղղակի գնացին Սամոթրակէ կղզին, իսկ հետևեալ օրը նաւ նստելով ուղեռուեցին Մակեդոնիայի գլխաւոր քաղաքը՝ Փիլիպուլէ։ Այստեղ մի քանի օր մնալուց յետոյ շաբաթ օրը գնացին քաղաքից դուրս դէպի Գետափը, ուր սովորաբար տեղացի հրէաները շաբաթ օրերը հաւաքւում էին աղօթելու։ Այդ տեղ գտնուող կանանց մէջ կար մի աստուածավախ ծիրանավաճառ կին՝ Լիդիա անունով։ Սա լսելով Պօղոս առաքեալի խօսքերը հաւատաց. ուստի թէ ինքը և թէ իւր ամբողջ գերդաստանը քրիստոնեայդառնալով մկրտուեցան։

գ) Պօղոսը ըժշկում է ղիւահար աղախնին. Մի անդամ էլ երբ շաբաթ օրն առաքեալները գնում էին գետափն աղօթելու, ճանապարհին նրանց մի դիւահար աղախին պատահեց, որը գուշակութիւններ էր անում և այդպիսով դրամ վաստակում։

Այդ դիւահար աղախինն երբ Պօղոսին իւր

ընկերների հետ տեսաւ, աղաղակելով ասաց. «Այս մարդիկն Աստուծոյ ծառաներն են և եկել են մեզ փրկութեան ճանապարհը քարոզելու»։

Եւ երբ այս խօսքերը մի քանի անգամ կըրկնեց, Պօղոսը զայրացաւ և դառնալով չար ոգուն ասաց. «Յիսուս Քրիստոսի անունով պատուելում եմ քեզ հեռանալ դրանից»։ Դեն իսկոյն հեռացաւ աղախնից և նա կատարելապէս առողջացաւ. Երբ աղախնի տէրերը տեսան, որ նրա առողջանալով իրանց եկամուտի աղբիւրը կ'պահակաի, զայրացան առաքեալների վրայ և բռնելով Պօղոսին ու Շիդային տարան դատաւորների մօտ և ասացին. «Այս մարդիկն իրանք հրէաներ են և մեզ հոռվմայեցիներիս այնպիսի բաներ են քարոզում, որ ոչ կարելի է ընդունել և ոչ էլ կատարել՝ նոքա շփոթութիւն են ձգում մեր քաղաքում և մեզ մի նոր հաւատի մասին քարոզում»։ Ամբոխը կատարեց. քաղաքի գլխաւորները հրամայեցին, որ առաքեալներին ծեծեն ու բանդապեկն և բանդապետին էլ հրամայեցին, որ շատ զգուշութեամբ նոցա պահի. Բանդապետըն էլ իշխանների տուած հրամանի համաձայն կարգադրեց Պօղոսի ուսները կոճղի մէջ ամրացնել և ձգել ներքին բանդը։

Դ) Առաքեալները ըանդում. (Պօղոսն ու Շիդան)։ Կէս գիշերին Պօղոսն ու Շիդան աղօթում և օրհնում էին Աստծուն, իսկ բանդապետին սմենայն ուշադրութեամբ լսում էին նոցա ա-

դօթքները։ Այսպիսի խորհրդաւոր լոռութեան ժամանակ, յանկարծ բանդի մէջ մի մեծ շարժում եղաւ. բանդապետը շարժի մեծ ձայնից զարթնելով տեսաւ, որ բանդի դոները բաց են և կառկածելով, որ բանդարկեաները փախել են, յուսահատութիւնից սուրը քաշեց և կամենում էր իրան սպանել։ Պօղոս առաքեան այդ բանը նըկատելով բարձր ձայնով ասաց. «Մի վախենար, մենք բոլորս էլ այստեղ ենք»։ Բանդապետը ճրագն առնելով ներս վազեց դէպի բանդը և տեսաւ, որ ամենքն էլ այստեղ են, շատ ուրախացաւ և իսկոյն ընկաւ Պօղոսի և Շիղայի ուներն ու ասաց. «Ասացէք, ի՞նչ պէտք է անեմ, որ փրկուեմ»։

Առաքեալներն ասացին. «Հաւատա Յիսուս Քրիստոսին. թէ դու և թէ քո տունը կ'փրկուին»։ Պօղոսը քրիստոնէական կրօնը քարողելով բանդապետին, նրան իւր ամբողջ ընտանիքով քրիստոնեայ մկրտեց։

Առաւոտը շատ վաղ դատաւորները մարդուղին, որ առաքեալներին բանդից ազատեն, Բանդապետն ուրախացած, դատաւորների այդ հրամանը յայտնելով Պօղոսին ասաց. «Այժմ իշխանութիւնը ձեզ արձակում է. ելէք և գնացէք խաղաղութեամբ»։ Այն ժամանակ Պօղոսն ասաց. «Մեզ չոռվմայ քաղաքացիներիս հրապարակով ծեծել տուին և այժմ ցանկանում են ծածուկ արձակել. ոչ. մենք այստեղից դուրս

չենք գնա. թող իրանք դատաւորները գան և մեզ արձակեն»։ Դատաւորներն երբ իմացան, որ իրանց բանդարկել տուած մարդիկը Հոռվմայ քաղաքացիներ են, շատ վախեցան և իսկոյն իրանք շտապեցին բանդ գալ և առաքեալներին խնդրել, որ բանդից դուրս գան։ Առաքեալներն էլ բանդից դուրս գալով գնացին Լիդիայի տունը, միսիթարեցին հաւատացեալներին և հեռացան Փիլիպպէ քաղաքից։

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զիրդին իւր միածին ետ. զի ամենայն, որ հաւատայ ՚ի նա մի կորից է, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս»։

Յովհ. Յ<sub>16</sub>:

## 20. ՊՕՂՈՍԸ ԹԵՍՍԱՂՈՆԻԿԵՈՒՄ ԵՒ ԲԵՐԻԱՅ-ՈՒՄ.

(Գործք առ. 17<sub>1</sub>—14):

Առաւոտը շատ վաղ դատաւորները Փիլիպպէից դուրս գալով զրջեցին Ամփիպօլիս, Ապողոնիա քաղաքները և վերջն անցան դէպի Թեսաղոնիկէ, ուր կար հրէից մի ժողովարան։ Պօղոսն ըստ իւր սովորութեան շաբաթ օրերը աղօթատուն գնաց քարոզելու և ժողովրդի առաջ բաց անելով Ս. Գիրքը. ցոյց տուեց այն մասը, ուր ասուած էր, թէ «Քրիստոսը պէտք է չարչարուէր, խաչուէր և մեռներից յարութիւն առնէր»։ Բարողի հետեանքն

այն եղաւ, որ լսողներից շատերը հաւատացին Յիսուս Քրիստոսին, ի թիւս որոց կային հեթանոս շատ պաշտօնեաներ և անուանի կանայք:

Այս բանը տեսնելով Քրիստոսին չ'հաւատացող հրէաները նախանձեցին առաքեալների վրայ և փողոցային մի քանի մարդկանց հետ աղմուկ բարձրացնելով քաղաքի մէջ մեծ շփոթութիւն ձգեցին և բոլորեքեան հաւաքուեցին քրիստոնեայ Յասովնի տան առաջ, ուր իջել էին Պօղոսն ու Շիղան և կամեցան նոցա հրապարակ տանել, որ հասարակ ամբոխը նրանց դատէ:

Եւ երբ զայրացած ամբոխն առաքեալներին չ'գտաւ, Յասովնին և նրա մօտ եղած հաւատացեալներին քաշ տալով տարաւ քահանայապետի մօտ, աղմուկ բարձրացնելով բողոքեց ասելով. «Աշխարհ շփոթողները մեր քաղաքն են եկել և Յասովնը նրանց իր տունն է ընդունել. դոքա ամենքն էլ կայսեր հակառակ մարդիկ են և Յիսուս անունով մէկին էլ թագաւոր են անուանում»: Այսպիսով խոռվարաներին յաջողուեց շփոթեցնել թէ քաղաքապետի և թէ քաղաքացւոց մտքերը:

Այն ժամանակ Թեսաղոնիկէի քրիստոնեաները գիշերով Պօղոսին ու Շիղային ճանապարհ ձգեցին դէպի Բերիս քաղաքը:

Երբ առաքեալներն այդ քաղաքն եկան, Պօղոսը շաբաթ օր շտապեց ժողովարան գնալ քարոզելու. Պէտք է ասել, որ այստեղի ժողովուր-

դըն աւելի խելացի վարուեց քան Թեսաղոնիկէինը, որովհետև սոքա առաքեալի քարոզը սիրով լսեցին և ուշադրութեամբ քննելուց յետոյ եղբակացրին, որ Պօղոսի քարոզած մեռելներից յարութիւն առած Քրիստոսը նա է, որի մասին Ա. Գրքում գրուած է. «Նա պէտք է չարչարուի և յարութիւն առնէ»: Ունկնդիրներից շատերը և նոյնիսկ մի քանի պարկեցան յոյն կանայք հաւատալով Յիսուսին, քրիստոնեայ դարձան:

Երբ Թեսաղոնիկէի հրէաներն իմացան, որ Պօղոսը Բերիայումն էլ է քարոզում, եկան այդ տեղ և սկսեցին ժողովրդին զրգուել առաքեալների դէմ: Հաւատացեալները տեսնելով նոցա չար նպատակը, Պօղոսին նաւ նստացրին և ուղարկեցին Աթէնք քաղաքը, իսկ Շիղան և Տիմոթէոսը մի առ ժամանակ մնացին Բերիս քաղաքը քրիստոնեաներին իրանց նոր հաւատի մէջ աւելի զօրացնելու:

«Երանի աղքատաց հոգւով զի նոցա է արքայութիւն Աստուծոյ»:

Մատթ. 5<sub>3</sub>.

«Զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն Աստուծոյ»:

Մատթ. 5<sub>20</sub>.

«Հոգի է Աստուած և երկրպագուաց  
նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է  
երկիր պագանել»:

Յովհ. 4<sub>24</sub>.

## 21. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼՆ ԱԹԷՆՔՈՒՄ.

(Գործք առ. 17<sub>16</sub>—<sub>21</sub>):

Պօղոս առաքեալն Աթէնք գալով սպասում էր Տիմոֆէոսին ու Շիղային: Մինչև նրանց գալը, նա ծանօթացաւ քաղաքի հետ և երբ տեսաւ, որ այդ քաղաքը լի է կուռքերով, շատ զարմացաւ: Պօղոսն այդ տեղ էլ իւր սովորութեան համաձայն, շաբաթ օրերը գնում էր ժողովարան և քարոզում էր հրէաներին. նոյնիսկ փողոցներով անցած ժամանակ, ում որ պատահում էր նրան սիրով քարոզում էր Քրիստոսի վարդապետութիւնը: Այդ տեղ գոյութիւն ունեցող էպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներից մի քանիսը վիճում էին Պօղոսի հետ, իսկ ոմանք էլ ասում էին. «Այս դատարկաշրջիկն ի՞նչ է ուզում ասել». միւսներն էլ ասում էին, «Երկի մի նոր աստուծոյ մասին է ցանկանում քարոզել»: Եւ որովհետև Աթէնացիները և այն տեղ բնակւող օտարները պարապում էին նոր հետաքրքիր բաներ պատմելով և կամ մի նոր բան լսելով, այդ պատճառաւ Պօղոսին տարան Արիստագոս և ասացին. «Քո քարոզածը մեղ համար

նորութիւն է, ուստի կամենում ենք իմանալ թէ այդ ի՞նչ նոր վարդապետութիւն է, որի մասին դու քարոզում ես»:

Պօղոսն Արիստագոսում: Պօղոսը կանգնելով Արիստագոսի մէջ ասաց. «Ով Աթէնացիներ, ես տեսնում եմ, որ դուք շատ կրօնասէր մարդիկ էք. ես շրջեցի ամեն տեղ. տեսայ ձեր աղօթատները և գտայ մի սեղան, որի վրայ գրուած էր՝ անծանօթ աստուծուն: Ես այժմ քարոզում եմ հէնց այդ անծանօթ Աստուծու մասին, որին դուք առանց ձանաչելու պաշտում էք: Այդ Աստուծը, որն ստեղծել է երկինքն և երկիրը, ձեռագործ տաճարներում չի բնակւում: Նա մարդկանց կողմից ոչ մի բանի կարիք չունի. ընդհակառակը նա է ամենքին կեանք տուողը:

Նա միակ Աստուծն է, և ցանկացել է որ երկրիս վրայ ապրող մարդկային բոլոր ազգերը մի արիւնից ստեղծուին և բնակուելով աշխարհիս վրայ, աշխատեն որոշ տեղեր որոնել իրեն և գտնել: Նա որոշել է մի օր աշխարհս արդարութեամբ դատել այն մարդու ձեռքով, որին մեռելներից յարութիւն տուաւ»:

Ունկնդիրներն երբ մեռելների յարութեան մասին լսեցին, սկսեցին ծաղրել Պօղոսին. իսկ նորութիւն սիրողներն ասում էին. «Այդ մասին մենք ցանկանում ենք կրկին քեզանից լսել»:

Պօղոսը երբ իւր քարոզը վերջացրեց, հեռացաւ այդ տեղից: Պօղոսի քարոզի հետևանքն

այն եղաւ, որ Արիսպագոսի անդամ՝ Դիոնիսիոսը, մի կին՝ Դամարիս անունով և ուրիշ շատ մարդիկ քրիստոնեայ դարձան:

«Եւ մեք հաւատացաք և ծանեաք զսէրըն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ»:

Ա. թուղթ Յովհ. 4<sub>16</sub>.

«Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն»:

Սաղմոս 18<sub>2</sub>.

## 22. ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ ԿՈՐՆԹՈՒՄՈՒՄ.

(Գործը առ. 18<sub>1</sub>—<sub>11</sub>):

Պօղոսն Աթէնքից հեռանալով գնաց Կորնթոս քաղաքը: Այդ տեղ նա պատահեց Պոնտացի Ակիւդոս անունով մի հրէայի, որն իւր կնոջ Պրիսկիլիայի հետ քրիստոնեայ էր դարձել և նոր էին եկել իտալիայից: (Կաւդիոս կայսրը հրամայել էր բոլոր հրէաներին չոռվմից հեռանալ): Պօղոսը գնաց նրանց մօտ. բայց որովհետեւ Պօղոսն նրանց հետ համարուեստ էր, գիտէին այծի մազից վրաններ և գորգեր պատրաստել, որոշեց մնալ նրանց մօտ և միասին աշխատել: Ամեն շաբաթ օրն էլ գնում էր ժողովրդանոցը, թէ հրէաներին և թէ յոյներին քալողելով յորդորում էր, որ Յիսուսը՝ Քրիստոսն է:

Եւ երբ Տիմոթէոսն ու Շիղան եկան, Պօղոսն աւելի սիրտ առնելով սկսեց մեծ եռանդով քարոզել հրէաներին, որ Յիսուսն իսրայէլի Մեսիան է կամ իրանց հայրերի սպասած Փրկիչը: Շատերը լսելով Պօղոսին չ'հաւատացին և սկսեցին հայհոյել. այն ժամանակ Պօղոսն ասաց. «Երբ չէք ցանկանում հաւատալ, ձեր արիւնը ձեր գլուխը լինի, ես անպարտ եմ. ես այսուհետեւ կ'զնամ հեթանոսներին կ'քարոզեմ, որոնց համար նոյն իսկ առաքեալ եմ նշանակուել»: Պօղոսը ժողովրդանոցից դուրս գալով գնաց Յուստոս անունով աստուածապաշտ մի մարդու մօտ, որն ի ծնէ հեթանոս էր եղել և որի տունը կից էր հրէաների ժողովրդանոցին:

Պօղոսի այս վճռական վարմունքն ազդեց Կրիստոս ժողովրդապետի վրայ, նա հաւատաց Յիսուս Քրիստոսին և իւր ամբողջ ընտանիքով մկրտուեց: Արա օրինակին հետևեցին Կորնթացիներից շատերը և Քրիստոսի անունով մկրտուեցին:

Այդ գիշերն Աստուած երևեցաւ Պօղոսին և ասաց. «Մի՛ վախենար, մի՛ լոի՛ր, խօսի՛ր, ես քեզ հետ եմ և ոչ ոք չի համարձակուի այլս քեզ վնասելու. այս քաղաքում ես դեռ շատ ժողովուրդ ունիմ»: Այնուհետեւ Պօղոսն այդ տեղ մի տարի ու կէս մնաց և շարունակ քարոզում էր Աստուծոյ ճշմարիտ խօսքը:

Պօղոսը Գալիովնի առաջ. Երբ Աքայիայում

Գալիովն էր Բղեշխի փոխանորդը, բոլոր հրէաները միանալով բռնեցին Պօղոսին և տարան ատեան և զանազան մեղքեր բարդելով նրա վրայ ասացին. «Սա Մովսիսի օրէնքի հակառակ ժողովրդին քարողում է ուրիշ Աստծու պաշտել»։ Պօղոս առաքեալն այս խօսքերը լսելով ցանկացաւ իրան պաշտպանել, սակայն Գալիովնը թոյլ չ'տուեց նրան խօսել և դարձաւ ժողովրդին ասաց. «Ով հրէաներ, եթէ սա մի անիրաւութիւն կամ չարութիւն գործած լինէր, ես սիրով կ'լըսէի ձեզ. բայց քանի որ խնդիրը ձեր կրօնի, Մեսիայի և Մովսիսի օրէնքի մասին է, այդ ձեր գործնէ, թէ ձեր վէճն ի՞նչպէս կ'վճռէք. Ես այդ տեսակ գործերի համար դատաւոր չեմ»։ Եւ խնդրին վերջ տալու համար Գալիովնը հրէաներին գատարանից հեռացրեց:

Յոյներն, որոնք մինչեւ այդ ժամանակը լոկ հանդիսատեսի գեր էին կատարում, երբ այս բանը տեսան, խիստ բարկացան Սոսթէնէս ժողովրդապետի վրայ, որն առաջնորդում էր հրէայ ամբոխին, ծեծեցին նրան։ Գալիովնը, որ ներկայ էր այդ տեսարանին ամեն բան տեսաւ և ոչինչ չ'ասեց։

Այսուհետեւ Պօղոսն երկար ժամանակ մնաց Կորնթոսում, քարողեց ժողովրդին և ոչ ոք չէր համարձակւում նրան միունէ վնաս տալ։

Բայց որովհետեւ ցանկանում էր Հոգեգալը ստեան տօնին Երուսաղէմում լինել, ուստի հրա-

ժեշտի ողջոյն տալով տեղացի քրիստոնեաներին եփեսոսի վրայով եկաւ կեսարիա, այցելեց այնտեղի քրիստոնեաներին և ապա Երուսաղէմ գնալուց յետոյ վերադարձաւ ասորական Անտիոք քաղաքը։

«Երթայք տուք զկայսերն կայսեր եւ ԿԱՍՏՈՒՃՈՅՆ, Ա.Ա.ՏՈՒՃՈՅ»։

Մատթ. 22<sub>21</sub>.

ՊՕՂՈՍԻ ԱԹԵՔԵԼԿԵՆ ԵՐԲԲՐԴ ԺԵՆԵԳԱԲՀՅՈՒԹԻՒՆՆԻ ՀԵԹԱՆԱԾՆԵՐԻ ՄԵջ։

### 23. ՊՕՂՈՍ ԱԹԵՔԵԼԿԵՆ ԵՓԵՍՈՍՈՒԽՄ.

(Գործք առ. 18<sub>23—28</sub>, 19<sub>1—40</sub>):

Պօղոս առաքեալն ասորական Անտիոքում մի առ ժամանակ մնալուց յետոյ գնաց Գաղատիա, Փուլգիա և նախկին ճանապարհորդութիւնների ժամանակ եղած երկրները նորահաւատացեալ քրիստոնեաներին ամրապնդելու իրանց հաւատի մէջ։

ա) Ապօղոս. Պօղոսի այս շրջագայութեան ժամանակ Եփեսոս եկաւ Աղէքսանդրացի մի հրէայ՝ Ապօղոս անունով, որը մի ճարտարախօս մարդ էր և բաւականին հմուտ էր Հին-Ռւխտի պատմութեանը։ Սա Աղէքսանդրիայում եղած ժամանակ ծանօթացել էր Յիսուսի վարդապետութեան հետ և ոգևորուած քարողում էր Փրկչի մասին. մի օր գնաց ժողովրդանոց և սկսեց հա-

մարձակ քարոզել։ Ակիւղան և Պրեսկիլան երբ այդ մասին իմացան, կանչեցին Պօղոսին իրանց մօտ և Աստուծոյ ճանապարհն աւելի որոշ կերպով բացատրեցին նրան և երբ Ապօղոսը ցանկացաւ Աքայիա գնալ, Ակիւղան և Պրեսկիլան յանձնարարական թուղթ գրեցին այն տեղի քրիստոնեաներին, որ նրան ընդունեն իրանց մէջ։

Ապօղոսն երբ Աքայիա հասաւ, հրապարակաւ սկսեց խիստ յանդիմանել հրէաներին և Ս. Գրքի վկայութեամբ ցոյց տուեց, որ Յիսուսը խոստացեալ Քրիստոսն է, շատերին գորացնելով իրանց հաւատի մէջ և այդպիսով արդարացաւ Պօղոսի խօսքերը. «Ես ցանեցի, Ապօղոսը ջուր տուաւ, իսկ Աստուծ աճեցրեց»։ Ահա այդ ժամանակամիջոցում երբ Ապօղոսն Աքայի կորնթոս քաղաքումն էր, Պօղոսը Փոքր Ասիայի ծովափնեայ երկիրները շրջելուց յետոյ եկաւ Եփեսոս քաղաքը. ուր պատահելով մի քանի հաւատացեալների հարցրեց. «Արդիօք Ս. Հոգին ընդունեցի՞ք, երբ քրիստոնեայ դարձաք»։

Նրանք պատասխանեցին. «Մենք նոյնիսկ չենք լսել, որ Ս. Հոգի կայ»։ Այն ժամանակ Պօղոսը հարցրեց. «Հապա ի՞նչով մկրտուեցաք»։ Հաւատացեալները պատասխանեցին «Յովհաննիսի մկրտութիւնով»։ Պօղոսն ասաց. «Յովհաննէսն ապաշխարութեան մկրտութիւնով էր մկրտում ժողովրդին և յայտնում, որ իրանից յետոյ եկող Յիսուս Քրիստոսին պէտք է հաւա-

տալ»։ Ունկնդիրներից 12 հոգի Պօղոսի այս խօսքերը լսելով Յիսուս Քրիստոսի անունով մկըլրտուեցան։ Այնուհետև Պօղոսն երեք ամիս շարունակ ազատ կերպով ժողովրդանոց էր գնում, քարոզում էր Աստուծոյ արքայութեան մասին և ոչ մի հակառակող չկար։

Երեք ամսից յետոյ հրէաները դիտմամբ սկսեցին բամբասել Պօղոսին ժողովրդի առաջ, որպէս թէ նրա քարոզած փրկութեան ճանապարհը սխալ է. ուստի Պօղոսը թողնելով ժողովրդանոցը, իւր ունկնդիրների հետ գնաց Տիւրան անունով հաւատացեալ մի քրիստոնեայի սրահը և այնտեղ երկու տարի քարոզելով Քրիստոսի վարդապետութիւնը շատ յոյների և հրէաների քրիստոնեայ դարձրեց. Պօղոսի քարոզները հաւատացեալների վրայ այնքան զօրեղ ազդեցութիւն թողեցին, որ նրա հակառակորդներից շատերը սկսեցին գալ նրա մօտ, խոստովանուել իրանց մեղքերն ու սխալները։ Նոյն իսկ շատ կախարդներ սկսեցին իրանց մեծ արժեք ունեցող գրքերը սիրով բերել Պօղոսի մօտ և իրեւ անպէտք գրքեր հրապարակով այրել տալ։

Այնուհետև Պօղոսը մտադրուեցաւ շրջել Մակեդոնիա, Աքայիա, գնալ Երուսաղէմ և ապա ցանկութիւն յայտնեց գնալ Հոռվմ։ Սակայն վերջը իւր մտադրութիւնը փոխելով ինքը դարձեալ մի առ ժամանակ մնաց Փոքր Ասիայում իսկ Տիւրոթէոսին և Երաստոսին ուղարկեց Մա-

կեդոնիա և Աքայիա որպէս զի այդտեղի քրիստոնեաներին ամրապնդեն և զօրացնեն իրանց հաւատի մէջ:

թ) Դիմիտրիս. սրա բարձրացրած աղմուկը գողոսի ղէմ. Տիմոթէոսի և Երաստոսի հեռանալուց յետոյ մեծ աղմուկ բարձրացաւ Եփեսոսում: Դիմիտրիս անունով մի արծաթագործ Եփեսոսում գտնուած Արտեմիս կուռքի մեծ տաճարի ձեռվ արծաթեայ փոքրիկ տաճարներ էր շինում և վաճառում: Սա մեծ շահ ուներ այդ գործից և այդ պատճառով էլ լաւ էր վարձատրում իր մօտ աշխատողներին: Մի օր Դիմիտրիսը ժողովեց իւր արուեստի մարդկանց և մեծ աղմուկը բարձրացրեց ասելով. «Դուք դիտէք, որ այս գործերն է մեր շահը. Պօղոսն Եփեսացիներին և Փոքր Ասիայի բոլոր բնակիչներին քարոզում է թէ ձեռքով շինուածները Աստուածներ չեն: Այդ խօսքերով ոչ թէ միայն մեր շահն է վտանգում այլ և մեծ Արդեմիսին (Դիանա) որին ամբողջ Ասիան պաշտում է, նրա տաճարի նշանակութիւնն է վայր ընկնում»: Այս խօսքերից յետոյ ամենքը բարձրածայն աղաղակեցին և ասացին. «Մեծ է Եփեսացւոց Արդեմիսը»: Կարճ ժամանակում ամբողջ քաղաքի ժողովուրդն ոտքի կանգնեց և հաւաքուած ամբոխը գնաց դէպի թատրոն և յարձակուեցաւ Պօղոս առաքեալի ճանապարհորդակիցների՝ Գայիոսի և Արիստարքոսու վրայ: Պօղոսն այդ բանն իմանա-

լով կամեցաւ մտնել թատրոն, որպէս զի իւր պատճառով բոնուածներին ազատէ. սակայն Եփեսոսի քրիստոնեաները թոյլ չ'տուին նրան ներս մտնելու: Կատաղած ամբոխն աղաղակում էր, շատերը նոյնիսկ չէին իմանում թէ ի՞նչու համար են հաւաքուել:

Այն ժամանակ Աղէքսանդրոս անունով մէկին առաջ քաշեցին, որ նա ժողովրդին բացատրէ թէ բանն ի՞նչումն է: Նա նշան արեց, որ խօսելու է. սակայն երբ ամբոխն իմացաւ, որ այդ մարդը հրէայ է, զայրացած միաբերան աղաղակելով ասաց. «Մեծ է Եփեսացւոց Արդեմիսը»: Ատենաղպիրն ամբոխին հանգստացնելուց յետոյ ասաց. «Ո՛վ Եփեսացիներ, ովք է այն մարդը, որ չ'զիտէ, որ Եփեսոս քաղաքը Մեծ Արդեմիս աստուծու տեղն է. ուրեմն հանգիստ եղէք. Բացի այդ այս մարդիկը՝ Գայիոսը և Արիստարքոսը, որոնց բոնել այստեղ էք բերել, ոչ կոատուններ կողոպտողներ են և ոչ էլ ձեր աստուծուն հայհոյողներ: Արդ, եթէ Դիմիտրիսը և նրա արուեստի մարդիկը մէկի հետ գործունեն, զբա համար ատեան կայ, թող գնան այն տեղ և դատաւորների մօտ յայտնեն իրանց գանգատը: Բացի այդ մենք էլ պատասխանաւու ենք այս օրուայ խռովութիւնների համար: Մենք ի՞նչ կարող ենք ասել, եթէ մեզ հարցնեն թէ այս մարդկանց ի՞նչու համար էք բոնել»:

Այս խօսքերից յետոյ աղմուկը դադարեց և

նայն խոնարհութեամբ ծառայել եմ։ Այդքան ժամանակամիջոցում շատ նենգութիւններ եմ տեսել հրէաների կողմից և որքան արտասուել եմ։ սակայն չ'սայելով այդ բոլորին, ես երբէք չեմ զլացել ձեզ բարին, ճշմարիտը և օգտակարն ուսուցանել։ Ինչպէս հրէաներին, այնպէս էլ հեթանոսներին ցոյց եմ տուել թէ դէպի Աստուած դառնալու համար ի՞նչպէս պէտք է ապաշխարել և թէ ի՞նչպիսի հաւատ պիտի ունենայ քրիստոնեան դէպի Յիսուս Քրիստոսը, որ կարողանայ մեղքերի թողութիւն ստանալով արժանանայ յաւիտենական կեանքի։

Միւնոյն ձայնն այսօր ի՞նձ կանչում է դէպի երուսաղէմ։ այն տեղ ի՞նչ կապանքներ ու նեղութիւններ են պատահելու ի՞նձ հետ, ես այդ չ'գիտեմ և ոչ մի պատճառ չի կարող ի՞նձ արգելք լինել այն տեղ գնալու համար։ Եւ որպէս կարողանամ ի՞նձ վրայ դրուած պարտքուրախութեամբ կատարել, ամենայն սիրով անձս կ'զոհեմ։ Այժմ հեռանում եմ ձեզանից։ գուցէ այլևս միմիանց չ'տեսնենք։ թող այս խորհրդաւոր օրը վկայ լինի, որ ես անմեղ եմ և ոչ մի տեղ երկիւղ չեմ կրել քարոզելու Աստուծոյ կամքը։ Բայց որովհետեւ այժմ ամբողջ գործի պատասխանատութիւնը ձեզ վրայ է մնում, ուստի զգոյշ եղէք թէ ձեր անձի և թէ ձեր հօտի վերաբերմամբ։ Ես գիտեմ, որ իմ հեռանալուց յետոյ ձեզ մօտ գալու են յափշտակող գայ-

ամենքը ցըռւեցին։ Պօղոսն էլ կանչեց իւր աշակերտներին, խօսեց նրանց հետ և իւր հրաժարականի ողջոյնը տալով նրանց գնաց դէպի Մակեդոնիա։

«Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է»։

Ա. Թ. Տիմոֆ. 6<sub>10</sub>:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցին զքեզ միայն ճշմարիտ Աստուած և զոր առաքեցեր դՅիսուս Քրիստոս»։

Յովհ. 17<sub>3</sub> :

24. Պօղոսը Միկեթում չըսժմարԱկան է ՏԱԼԻՍ ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՑՆԵՐԻՆ.

(Գործք առ. 20<sub>15</sub>—38):

Պօղոսի քարոզը. Պօղոս առաքեալը Մակեդոնիայում երեք ամիս շրջելուց յետոյ որոշեց Փիլիպպէի, Տրովատայի և Եփեսոսի մօտով, ծովային ճանապարհով վերադառնալ երուսաղէմ, որպէս զի Պենգէկոստէի տօնին կարողանայ այն տեղ լինել. ուստի Մակեդոնիայից նաւեց դէպի Միկետ քաղաքը և այն տեղից մարդիկ ուղարկեց Եփեսոս, այն տեղի քրիստոնէական եկեղեցու երէցներին իւր մօտ հրաւիրելով խօսեց նրանց հետ և յուսադրելով ասաց. «Զեզ լաւ յայտնի է, որ ես Ասիա եկածս օրից մինչև այժմ միշտ ձեզ հետ եմ եղել և Աստծուն ամե-

և ձեզանից շատերին աշխատելու են գայթակեցնել և իրանց հետևող դարձնել։ Արդ, արթուն կացէք այնպէս, ինչպէս որ ես երեք տարի շարունակ ժողովրդի համար արթուն էի և այդքան ժամանակամիջոցում ժողովրդի ոչ արծաթը, ոչ ոսկին և կամ հանդերձը չեմ ցանկացել. այլ ընդհակառակը թէ իմ և թէ ինձ հետ եղողների օրական պարէնն իմ ձեռքերովն եմ աշխատել։ Պօղոսն երբ իւր քարոզը վերջացրեց, ծունը դրեց և ամենքի հետ աղօթք արաւ։ Առաքեալի շուրջը գտնուղ բոլոր հաւատացեալները լաց եղան և նրա վզովն ընկնելով ի սրտէ ցաւում և համբուրում էին, որ այլևս նրան չեն տեսնելու։ Բոլորեքեան Պօղոսին տարան մինչև ծովափը և նաւ նստացնելով ճանապարհ դրին։

«Յիշեցէք զառաջնորդու ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ»։

Թուղթ առ Երբ. 13<sub>6</sub>։

«Եթէ ոք կամի գու զկնի իմ, ուրասցի զանձն իւր և բարձէ զիսաչ իւր և եկեսցէ զկնի իմ»։

Մարկ. 8<sub>34</sub>։

25.ՊՕՂՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԻԼԵՏԻՑ ԴէՊԻ ԵՐՈՒ ՍԱՂԵՄ.

(Գործք առ. 21<sub>1</sub>—15)։

Պօղոս առաքեալը Միլետում քրիստոնեա-

ներին հրաժեշտի ողջոյն տալուց յետոյն աւեց դէպի կով, չոռովոս և Պատարա քաղաքները։ Պատարայում առաքեալը մի նաւ գտաւ, որ գնում էր ուղղակի Փիւնիկէ. նստեց այդ նաւը և կիապոս կղուն հարուային կողմով նաւեց դէպի Ասորիք և իջաւ Տիւրոս քաղաքը, ուր նաւը ստիպուած եղաւ կանգնել իւր բեռլթափել և նոր բեռն ընդունել։ Պօղոսն այդ դէպից օգտուելով եօթն օր մնաց այդ տեղ և շարունակ ամեն օր հանդիպելով քրիստոնեաներին, միխթարեց նրանց ու զօրացրեց իրանց հաւատի մէջ։ Տիւրոսից հեռանալու ժամանակ բոլոր քրիստոնեաներն իրանց կանանցով, զաւակներով գնացին մինչև ծովափը ճանապարհ ձգելու. ուր ամենքը չոքեցին, աղօթք արին և բարի ճանապարհ մաղթեցին առաքեալներին։ Պօղոսը Տիւրոսից նաւեց դէպի Պտղոմայիդա քաղաքը, ուր մի օր մնալով տեսաւ այնտեղ ապրող քրիստոնեաներին։

Հետեւալ օրն իւր ընկերներով եկաւ կեսարիա քաղաքը և իջաւ եօթը սարկաւագներից մէկի՝ Փիլիպպոսի տանը։ Փիլիպպոսն արդէն Ա. Հոգուց քարոզելու իրաւունք էր ստացել. սա ունէր չորս աղջիկ, որոնք մարգարէական շնորհ ունէին զուշակելու։ Պօղոսը բաւականին ժամանակ մնաց այդ տեղ։ Ահա այդ միջոցներում չըէաստանից կեսարիա եկաւ մի մարգարէ Ազարոս անունով. սա վեր առաւ Պօղոս առաքեալի գօտին կապեց իւր ձեռներն ու ոտները և մար-

գարէանալով ասաց. «Այս գօտու տիրոջը հրէ-  
աներն Երուսաղէմում այսպէս պէտք է կապէն  
և հեթանոսների ձեռքը մատնեն»:

Ագաբոսի այս խօսքերը լսելով Կեսարիայի  
քրիստոնեաները, լալով աղաչեցին Պօղոսին, որ  
Երուսաղէմ չ'գնայ:

Սակայն Պօղոսն ասաց նրանց. «Ի՞նչէք ա-  
նում. ի՞նչու էք լաց լինում և դրանով իմ սիրալ  
ճմլում: Ես Յիսուս Քրիստոսի համար պատրաստ  
եմ ոչ թէ միայն բռնուելու և կապուելու, այլև  
մեռնելու»: Պօղոսը նրանց աղաչանքի և լացի  
վրայ ուշք չ'դարձրեց և գնաց Երուսաղէմ:

«Յայսմ գիտասցեն ամենեքնան, եթէ  
իմ աշակերտք իցէք»:

Յովհ. 13<sub>35</sub>.

«Եղիցին կամք քո...»:

Մատթ. 6<sub>10</sub>:

## 26. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼՆ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ.

(Գործք առ. 21<sub>17</sub>—<sub>40</sub> 22, 23<sub>1</sub>—<sub>12</sub>).

ա) Պօղոսին բանդարկուս են Երուսաղէմում.  
Պօղոսը 58 թուականի մայիսի 15-ին հասաւ  
Երուսաղէմ, ուր քրիստոնեաները նրան սիրով  
ընդունեցին: Հետևեալ օրն իւր ընկերների հետ  
գնաց Յակովոս առաքեալի մօտ, որտեղ ժողովի  
հաւաքուեցան քրիստոնէական եկեղեցու բոլոր

երէցները: Պօղոսը ողջունելով ժողովականներին  
մանրամասն պատմեց թէ ինչպէս Աստուծոյ  
օգնութեամբ շրջեց զանազան քաղաքներ և ա-  
մեն տեսակ նեղութիւնների ու վտանգների են-  
թարկելով իւր անձը յաջողութեամբ կատարեց  
իւր առաքելական գործը: Ունկնդիրները լսելով  
Պօղոս առաքեալի այդ խօսքերն, ուրախացան և  
միաբերան փառք տուին Աստուծուն ու շնոր-  
հակալ եղան:

Երուսաղէմում Հոգեգալստեան տօնից եօթն  
օր առաջ հրէաները հեռու տեղերից եկող ուխ-  
տաւորների համար հանդէսներ էին կատարում  
և երբ այդ եօթն օրը լրանում էր, այն ժամա-  
նակ ուխտաւորներն իրաւունք էին ստանում ա-  
ռաւոտեան 9-ը ժամին մտնել Սըրովթիւն. ահա  
այդ ժամանակ երբ Պօղոսը մտաւ տաճարը և  
իւր զոհն էր կատարում, Ասիայից եկած հրէա-  
ները նրան տեսնելով շատ զայրացան և սկսե-  
ցին ամբոխին գրգռել և գոռալով յարձակուեցան  
Պօղոսի վրայ ու ասացին. «Օգնեցէք, ով իսրայ-  
էլացիներ, սա այն մարդն է, որ ամեն տեղ ժո-  
ղովրդի, օրէնքի և տաճարի հակառակ է քարո-  
զում. այդ դեռ բաւական չէ, իւր հետ հեթանոս-  
ներին տաճար բերելով՝ պղծեց այս սուրբ տեղը»:

Հրէաները առաջուց տեսել էին, որ Տրոփիմոս  
Եփեսացին Երուսաղէմում շրջում էր Պօղոսի հետ,  
հետեապէս կարծում էին, որ նրան էլ տաճար  
բերած կ'լինի:

Ամբողջ քաղաքն աղմկեց և կատաղած ամբոխը յարձակուեց Պօղոսի վրայ, բռնեց նրան և քաշ տալով տարաւ հեթանոսների գաւիթ կոչուած տեղը, որպէսզի իւր աղմուկներով տաճարի ծիսակատարութիւնը չ'խանգարէ։ Այդ տեղ ցանկացան Պօղոսին քարկոծել. սակայն տաճարին կից Անտօնիոսի աշտարակ անունով հռովմէտական մի զօրանոց կար, երբ լուրը հասաւ այնտեղի հազարապետին, որ ամբողջ Երուսաղէմի ժողովուրդն աղմուկի մէջ է, իսկոյն զինուրդների և հարիւրապետների հետ շտապեց խռովութեան տեղը։ Ամբոխն այս տեսնելով վախեցաւ և հանգիստ թողեց Պօղոսին։ Հազարապետը կարծելով թէ Պօղոսը մի մարդասպան է, բռնեց, երկու շղթայով կապել տուեց և ապա դառնալով դէպի հաւաքուած ամբոխը հարցրեց. «Ո՞վ է այս մարդը և ի՞նչ է արել»։ Ամբոխի միջից ամեն մինը սկսեց մի բան աղաղակել և ոչինչ չ'հասկացուեց. այն ժամանակ հազարապետը հրամայեց Պօղոսին տանել Անտօնիոսի աշտարակը։ Երբ տաճարի սահմաններից դուրս բերին Պօղոսին, կատաղած ամբոխը յարձակուեց իւր զոհի վրայ և ցանկանում էր կտոր կտոր անել. սակայն զինուուրներն ստիպուած եղան զէնքի ոյժով հազիւ հազ Պօղոսին աղատել։ Իսկ կատաղած ամբոխն անդադար աղաղակելով ասում էր. «Բարձ զդա»։ Եւ երբ Պօղոսը զօրանոց մտաւ, և տեսաւ, որ այլևս հրէաներից երկիւղ չ'կայ, դիմեց հազա-

րապետին և խօսելու իրաւուք խնդրեց։ Այն ժամանակ հազարապետը հարցրեց Պօղոսին. «Յունարէն գիտե՞ս արդեօք, և դու այն եգիպտացին չե՞ս, որ սրանից 14 ամիս առաջ մեծ խռովութիւն ձգեցիր և 4,000 աւազակ մարդիկ ոտքի հանեցիր և տարար դէպի անապատը»։ Պօղոսը պատասխանեց. «Ես հրէայ եմ և Կիլիկիայի նշանաւոր Տարսոն քաղաքի քաղաքացի. խնդրում եմ թոյլ տաք ինձ այս ժողովրդի հետ խօսելու»։ Հազարապետը յարգելով Պօղոսի խնդիրը թոյլ տուեց խօսելու։

թ) Պօղոսը պաշտպանում է իրան. Պօղոսը հազարապետից իրաւունք առնելուց յետոյ կանգնեց աշտարակի աստիճանների վրայ և դառնալով ժողովրդին նշան արեց, որ իրան լսէ և երբայական լեզուով ասաց. «Ո՞վ եղբայրներ և հայրեր. ես հրէայ եմ և ծնուել եմ Կիլիկիայի Տարսոն քաղաքում. ուսել եմ Երուսաղէմում մեծ ռաբբի Գամաղիէլի մօտ և դաստիարակուել եմ իմ հայրենի օրէնքի համաձայն։ Ես այն աստիճան ատում էի քրիստոնեաներին, որ Երուսաղէմում եղածս ժամանակ թէ աղամարդկանց և թէ կանանց բռնել, կապել էի տալիս և բանդն ուղարկում։ Այդ բանը կարող են վկայել քահանայապետը և ծերերի ժողովը. այդ դեռ բաւական չէր. ես քահանայապետից թուղթ առնելով գնացի Դամակոս քաղաքը, որպէս զի այն տեղ գտնուող քրիստոնեաներին կապել տամ և Երու-

սաղէմ ուղարկեմ։ Սակայն երբ Դամասկոսին մօտեցայ, յանկարծ մի լոյս փայլեց, ևս երկիւղից վայր ընկայ գետնին և մի ձայն լսուեց, որ ասում էր. — «Սաւուղ, Սաւուղ. ի՞նչու ես ինձ հալածում»։ Ես հարցրի. — Ո՞վ ես դու Տէր. ձայնը պատասխանեց. — «Ես Յիսուս Նազովրեցին եմ, որին դու հալածում ես»։ Այն ժամանակ ես կրկին հարցրի. — Տէր, ի՞նչ անեմ. — Տէրը պատասխանեց. — «Վէր կաց, գնա Դամասկոս և այն տեղ քեզ կասեն թէ ի՞նչ պէտք է անես»։ — Լուսոյ փայլեց ես կուրացած ուրիշների օգնութեամբ գնացի Դամասկոս. ուր ապրում էր մի երկիւղած մարդ՝ Անանիա անունով, որը լաւ անուն ունէր Դամասկոսի հրէաների մէջ։ Անանիան ինձ մօտ եկաւ և ասաց. — «Սաւուղ եղբայր, վերեւ նայիր. մեր հայրերի Աստուածը քեզ ընտրել է, որ գնաս Յիսուս Քրիստոսի մասին վկայես բոլոր մարդկանց. վէր կաց, մկրտուիր և Տիրոջ անունով սրբիր քո մեղքերը»։ — Ես լսեցի Տիրոջ ձայնը և այդ օրուանից գնացի նրա ճանապարհով, քրիստոնեայ դարձայ և սկսեցի քարոզել։ Եւ երբ երեք տարուց յետոյ նորից երուսաղէմ դարձայ և իմ ազգի որդոց դարձի համար տաճարում աղօթում էի, զարմանքը պաշարեց ինձ և ես տեսայ Յիսուսին, որն ասում էր ինձ. «Շտապիր, դուքս եկ երուսաղէմից. այն վկայութիւններն, որ դու անում ես իմ մասին, սոքաչեն ընդունի. հեռացիր այստեղից. ես քեզ պէտք

է ուղարկեմ հեռու երկրներ հեթանոսներին քարոզելու»։

Մինչև այս խօսքերի ասելը, բոլոր հրէաներն ուղաղըսթեամբ լսում էին Պօղոսին, այնուհետեւ մեծ աղմուկ բարձրացնելով ասացին հազարապետին. «Այս մարդն արժանի չէ ապրելու. բարձ զդա»։ Երբոր հազարապետն այս աղմուկը լսեց, հրամայեց Պօղոսին զօրանոց տանել և մտրակելով ստիպեց, որ իւր յանցանքը խոստովանի։ Եւ երբ կաշուէ փոկերով ծեծեցին, Պօղոսն ասաց իւր մօա կանգնած հարիւրապետին. «Աս արդարութիւն է, որ դու մի հոռվմայեցի մարդու գեռ չ'դատապարտած ծեծում ես»։

գ) Հազարապետի խօսակցութիւնը Պօղոսի հետ. Հարիւրապետն երբ իմացաւ, որ Պօղոսը Հռովմի քաղաքացի է, իսկոյն գնաց հազարապետի մօտ և յայտնեց նրան։ Այն ժամանակ հազարապետը դալով Պօղոսի մօտ հարցրեց.

«Ասա ինձ, ճշմարիտ է, որ դու Հռովմայ քաղաքացի ես»։ Պօղոսը պատասխանեց. «Այն»։ Հազարապետն իւր խօսքը շարունակելով ասաց. «Ես Հռովմայ քաղաքացիութեան իրաւունքը ձեռք եմ բերել մեծաքանակ դրամով»։ Պօղոսն ասաց. «Ես ոչ թէ դրամով եմ ստացել Հռովմայ քաղաքացիութեան իրաւունքը, այլ ծնուել եմ որպէս Հռովմայ քաղաքացի»։ Եւ երբ հազարապետը Պօղոսի Հռովմայ քաղաքացի լինելը ճշտեց, շատ վախեցաւ, որ առանց նրա յանցանքը հաս-

տատելու, հոռվմէական օրէնքի հակառակ, կապել է տուել: Հետեւեալ որը ցանկացաւ հաստատապէս իմանալ թէ ինչու համար են հրէաները Պօղոսից գանդատում, ուստի հրամայեց նրա կապանքներն արձակել և պատուիրեց քահանայապետին ու ատեանի բոլոր անդամներին կանչել: Ատեան կազմուեց և Պօղոսին էլ այդ տեղ բերին: Պօղոսն երբ ատեանում հրէաներին տեսաւ ասաց. «Արք եղբարք, ես որպէս հրէայ մանկութիւնիցս մինչև այսօր ուղիղ մտքով եմ գնացել Աստծու առաջ»: Անանիա քահանայապետը այս խօսքերը լսելով հրամայեց Պօղոսի բերանին խիմեն: Այն ժամանակ Պօղոսն ասաց քահանայապետին. «Բուեալ որմ, որու արտաքուստ գեղեցիկ ես երեսում, բայց ներքուստ լիքն ես ամեն տեսակ տգեղութեամբ: Ինչպէս որ դու ինձ խփեցիր, այնպէս էլ Աստուած քեզ կ'խփի. դու նստել ես դատաւորական աթոռի վրայ օրէնքով դատելու, թէ օրէնքի հակառակ ինձ խփելու»: Մօտիկ կանգնող հրէաները զայրանալով Պօղոսի վրայ ասացին. «Դու Աստուծոյ քահանայապետին հայհոյնում ես»: Պօղոսը պատասխանեց. «Եղբայրնե՛ր, ես չ'գիտէի, որ նա քահանայապետ է. ճշմարիտ է, դրուած է — «Քո ժողովրդի իշխաններին չ'պէտք է հայհոյես»:

η) Փարիսեցու իննդիր...: Եւ երբ Պօղոսն իմացաւ, որ ներկայ եկողների մի մասը սադուկեցի է, իսկ միւս մասը փարիսեցի, ասաց. «Արք

եղբարք, ես փարիսեցի եմ և փարիսեցու որդի. ես այսօր դատւում եմ նրա համար, որ հանդերձեալ կեանք և մեռելների յարութիւն եմ քարոզել»: Պօղոսի այս խօսքերից յետոյ սադուկեցիների և փարիսեցիների մէջ երկպառակութիւն ընկաւ. որովհետև սադուկեցիներն ասում էին թէ ոչ մեռելների յարութիւն կայ, ոչ հրեշտակ և ոչ էլ հոգի, իսկ փարիսեցիներն ընդհակառակն ընդունում և հաւատում էին, որ կայ մեռելների յարութիւն, հոգի և հրեշտակներ:

Ահա այս ինդիրների շուրջը մեծ աղմուկ բարձրացաւ և դպիրներից ոմանք փարիսեցիների կողմն անցնելով սկսեցին Պօղոսին պաշտպանել և ասել. «Մենք ոչ մի յանցանք չենք գտնում այս մարդու մէջ. սա ժողովրդի, օրէնքի և մեր սըրբութիւնների հակառակ ոչինչ չէ քարոզել. իսկ թէ Դամասկոս գնալիս ճանապարհին նրան հրեշտակ կամ ոգի է երևացել և յետ դարձրել, շատ կարելի է, որ այդ ուղիղ լինի»: Սադուկեցիների և փարիսեցիների միջի խոռվութիւնը քանի գնաց աւելի սաստկացու և հազարապետը վախեցաւ մի գուցէ Պօղոսի հակառակորդները յարձակուեն և սպանեն առաքեալին, հրամայեց զինուորներին, որ նրան զօրանոց տանեն: Հետեւեալ գիշերը Տէրը երեալով Պօղոսին ասաց. «Պօղոս, քաջացիք. ինչպէս որ ինձ համար Երուսաղէմում քարոզեցիր, այնպէս էլ պէտք է գնաս չոռվմ և իմ մասին քարոզես»:

«Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գլուխեանց  
և Աստուած ամենայն միմիթարութեան, որ  
միմիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս  
մեր, առ ի կարող լինելոյ մեզ միմիթարել  
դայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցեն,  
միմիթարութեամբն որով մեք միմիթարիմք  
յԱստուծոյ»:

Կորնթաց. Բ. Թուղթ 1<sub>3</sub>—<sub>5</sub>:

27) Պօղոս ԱռԱթեԱլը կեՍԱՐԻԱՅԻ ՓԵԼԻՔԱ  
ԿՈՒՍԱԿԱԼԻ ՄՕՏ.

(Գործք առ. 23<sub>12</sub>—<sub>35</sub> և 24 դւ.):

ա) Դասանութիւն Պօղոսի ղէմ. Պօղոսին  
գօրանոց տանելուց յետոյ հետեւեալ օրը հրէա-  
ներից մօտ քառասուն հոգի որոշեցին չ'ուտեն,  
չ'խմեն մինչև որ Պօղոսին չ'սպանեն. ուստի դո-  
քա եկան քահանայապետի և ծերերի մօտ ասացին.  
«Մենք որոշել ենք ամեն միջոց գործ դնել և  
Պօղոսին սպանել: Դուք դիմեցէք հազարապետին,  
որ Պօղոսին նորից ատեան բերի իբրև թէ դուք  
ցանկանում էք ամեն բան ճշմարտութեամբ ի-  
մանալ: Մենք էլ ճանապարհին կ'յարձակուենք  
նրա վրայ և կ'սպանենք»: Այս դաւաճանութիւնն  
իմանալով Պօղոսի քրոջ որդին, եկաւ Պօղոսի մօտ  
և ամեն բան պատմեց: Պօղոսն էլ հարիւրապետ-  
ներից մէկին իւր մօտ կանչելով խնդրեց, որ  
այդ պատաճանուն տանի հազարապետի մօտ, որով-

հետեւ բան ունի նրան ասելու: Հարիւրապետը  
Պօղոսի ցանկութեան համաձայն այդ պատաճուն  
տարաւ հազարապետի մօտ: Պատաճին պատմեց  
հազարապետին. «Հրէաները որոշել են միաբերան  
քեզ խնդրել որ էգուց Պօղոսին տանես ատեան,  
որովհետեւ իրանք կամենում են ճշմարիտ քննու-  
թիւն անել նրա համար. սակայն դու չ'հաւա-  
տաս նրանց խօսքերին: 40 հոգի դարան են մը-  
տել և որոշել են Պօղոսին զօրանոցից ատեան  
տանելիս սպանել»:

Հազարապետն իսկոյն հարիւրապետներից  
երկուսին իւր մօտը կանչելով հրամայեց 200  
զինուոր, 70 հեծելազօր և 200 տիգաւոր մար-  
դիկ պատրաստել որպէս զի Պօղոսին անվտանգ  
տանեն կեսարիա Փելիքս կուսակալի մօտ: Եւ  
մի նամակ էլ գրեց Փելիքս կուսակալին այս ի-  
մաստով. «Պատուական կուսակալ Փիլիքոսին, ող-  
ջոյն Լիւսիաս հազարապետից, հրէաներն այս  
մարդուն բռնելով ցանկանում էին սպանել. ես  
զինուորներիս հետ վրայ հասայ և ազատեցի. սա-  
կայն իմանալով, որ Հոռվմայեցի է, կամեցայ նրա  
յանցանքն իմանալ. ատեան կազմելով քննեցի և  
տեսայ, որ դա կապուելու կամ մեռնելու արժա-  
նի ոչ մի գործ չի կատարել, սակայն իմանալով,  
որ հրէաները դրա դէմ նենգութիւն են կազմել,  
որոշեցի ձեզ մօտ ուղարկել, որ դուք մի վճիռ  
տաք»: Զինուորներն հազարապետի հրամանի  
համաձայն Պօղոսին տարան կեսարիա և գրած

թուղթն էլ յանձնեցին կուսակալին։ Կուսակալը կարդալով թուղթը հարցրեց Պօղոսին, թէ ո՞ր գաւառիցն է։ և երբ տեղեկացաւ, որ Կիլիկիայից է, ասաց. «Ես քեզ կ'լսեմ այն ժամանակ, երբ քո դէմ չարախոսողներն էլ կ'գան»։ Հրամայեց, որ Հերովդէսի պալատը տանեն և այն տեղ պահեն։

բ) Պօղոսի հակառակորդների մեղաղբանքը. Հինգ օրից յետոյ Պօղոսի հակառակորդներից Անանիա քանայապետը հրէից ծերերի և մի ոմնաճարտարախօս Տերտիլիոսի հետ գնացին կեսարիա և ներկայանալով կուսակալին յայտնեցին, որ իրանք եկել են Պօղոսի գործի համար։ Ատեան կազմուեց և Պօղոս առաքեալին բանդից դուրս բերին դատելու։ Տերտիլիոսը Պօղոսին ամբաստանելով ասաց. «Ո՞վ Փելիքս, քո իշխանութեան օրով քեզ յանձնուած երկիրը խաղաղութիւն է վայելել և հրէից ազգի համար ամեն տեղ շատ օգտաւէտ հոգատարութիւններ ես արել, այդ պատճառով էլ մենք շատ շնորհակալ ենք քեզանից։ Եւ որպէս զի քեզ աւելի նեղութիւն չ'պատճառեմ, խնդրում եմ, քեզ յատուկ հեղութեամբ լսես մեզ։ Մենք գտանք, որ այս մարդը մի ֆսասակար անձն է և մի երկրից միւսն անցնելով իւր ֆսասակար և թիւնաւոր քարոզներով ամեն ուրէք հրէաների մտքերը պղտորում է, իրան համարում է ժողովրդի ճշշմարիտ պաշտպան և նազովրեցու աղանդի ա-

ռաջնորդ։ Սա քարոզում է, որ Յիսուս Նազովրեցին Քրիստոսն է. և երբ կամեցաւ մեր տաճարը պղծել, բռնեցինք և ցանկանում էինք մեր օրէնքով դատել. սակայն Լիւսիաս հազարապետն եկաւ, բռնութեամբ խլեց մեր ձեռքից և ուղարկեց այս տեղ, որ դուք քննէք և մի որոշում տաք։ Անանիա քահանայապետը և իւր հետ եղող հրէաներն, որպէսզի խնդրին աւելի ոյժ տան, միաբերան վկայեցին, որ Տերտիլիոսի ասածները ճշմարիտ են։

Կուսակալը մի կողմի ասելիքը լսելուց յետոյ, թոյլ տուեց Պօղոսին պատասխանել։

գ) Պօղոսի պաշտպանողական ծառը. — Պօղոսն ասաց. «Ո՞վ Փելիքս, որքան ես զիտեմ, դու երկար տարիներ այս ազգի դատաւորն ես և լաւ ես ճանաչում նրան։ Ես այսօր ինձ երջանիկ եմ համարում, որ մի այդպիսի դատաւորի առաջ եմ կանգնած։ ուստի ես պատրաստ եմ ամենայն սիրով պատասխանել այն բոլոր մեղադրանքներին, որոնք սրանք բարդում են, ինձ վրայ։ Դու շատ հեշտութեամբ կարող ես ստուգել, որ ես սրանից 12 օր առաջ դուրս եկայ կեսարիայից և ուխտ գնացի երուսաղէմ։ Դոքաինձ ոչ տեսել են տաճարում մէկի հետ խօսելիս և կամ ժողովրդին շուրջս հաւաքած խորվութիւն անելիս. իմ հակառակորդները ոչ մի փաստով չեն կարող հաստատել իրանց ամբաստանութիւն-

ները. դրանց ասածները լոկ խօսքեր են և զուրկ ձշմարտութիւնից: Պէտք է ասեմ, որ այն ճառնապարհը որով ես այժմ գնում եմ, նոյն ճառնապարհն է, որով գնացել են իմ նախահայրերս՝ Արքահամբ, իսահակը, Յակովը և պաշտել են ճշշմարիտ Աստծուն: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ իբրև թէ ես տաճարը պղծել եմ, պէտք է ասեմ, որ ես երկար տարիներ եղել եմ օտար երկրներում և այժմ միայն վերադարձայ Երուսաղէմ: Վերադարձիս, որպէս հրէայ, հետո էլ տուրք՝ ողորմութիւն բերի իմ ազգակիցների համար: Ճշմարիտ է, ես աաճարում զոհ արեցի և այն պէս իմ պարտքը կատարեցի. բայց պէտք է յայտնեմ, որ զոհ անելիս ինձ ոչ թէ Անանիան և նրա հետ եկող այս մարդիկը տեսան տաճարում, ոչ. այլ այդ բանը տեսել են Ասիայից եկող մի քանի հրէաներ և դոքա էլ տեսել են ինձ ոչ թէ ժողովրդի բազմութիւնը գլխիս հաւաքած խոռվելիս, այլ միայն զոհ անելիս»:

«Եթէ ես մի այդպիսի յանցանք գործած լինէի, նրանք անշուշտ օր առաջ կ'զային ձեզ մօտ և կ'զանդատուէին ինձ վրայ: Իսկական վկաներ չկան այստեղ և եթէ այսօր քահանայապետը և ծերերը փոխարինում են այն վկաներին, ի՞նչու նոքա Լիւսիան հազարապետի ներկայութեամբ ինձ այդ բաների մէջ չմեղադրեցին. իսկ երբ ես ատեանում յայտնեցի, որ հաւա-

տում եմ մեռելների յարութիւնը, նոքա իսկոյն ինձ դատի կանչեցին»:

η) Կոտակալի բռնած կեղծ ղիզքը. Փելիքս կուսակալը լսելով Պօղոսի այս համառօտ պատասխանը, նա այն համոզումը կազմեց, որ առաքեալն արդարէ և հրէաները նախանձից դըրդուած նրա դէմ զանազան չարութիւններ են ստեղծում: Սակայն լինելով մի երեսպաշտ անձըն, չ'ուզեց Պօղոսի խնդրին մի կերպ վերջ դնելով վիրաւորել հրէաներին, ուստի դարձաւ Անանիա քահանայապետին և նրա հետ եկող հրէաներին ասաց. «Երբ Լիւսիաս հազարապետը գայ, ես կ'տեղեկանամ գործի ամբողջութեան հետ և ըստ այնմ մի որոշում կ'անեմ»: Ահա Փելիքսը հրէաներին գուր գալու համար հրամայեց Պօղոս առաքեալին նորից զինուորական հսկողութեան տակ պահել. իսկ միւս կողմից առաքեալին ազատութիւն տուեց, որ ամեն մարդ կարողանայ նրա մօտ գնալ, գալ և ծառայել:

Այս դատից մի քանի օր յետոյ Փելիքս կուսակալն իւր կին Դրուսիլիայի հետ (որը հրէայ էր) եկաւ Պօղոսի մօտ: Պօղոսն օգտուելով հաներից, քրիստոնէական մաքուր հաւատի մասին շատ տեղեկութիւններ հաղորդեց կուսակալին: Եւ երբ խօսեց արդարութեան, ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանի մասին, Փելիքսն այն աստիճանի գրաւուեցաւ նրա խօսքերով, որ հրամայեց Պօղոսին անմիջա-

պէս ընդհատել իւր խօսակցութիւնը և ասաց. «Պօղոս, բաւական է. զու այժմ գնա և երբ ժամանակ ունենամ քեզ նորից կ'կանչեմ, որ շարունակես քո ասելիքը»:

Փելիքսը կաշառակեր մարդ լինելով յոյս ունէր Պօղոսից կաշառք ստանալ և ըստայնմ արձակել. այդ պատճառով յաճախ կանչում էր իւր մօար և հետը խօսում: Երկու տարուց յետոյ այն է 60 թուին Փելիքս կուսակալի տեղն եկաւ մի ուրիշ նոր կուսակալ՝ Փեստոս Պորկիոսը:

«Զի ամենայն որ զչար գործէ ատեաց զլոյս և նչ գայ առ լոյսն»:

Յովհ. 4<sub>20</sub>.

«Այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարանին, նոյն պէս և խօսիմք, նչ իբրև մարդկանց հաճոյ լինել, այլ Աստուծոյ, որ քննէ զսիրտս մեր»:

Ա. Թ. Թեսաղ. 2<sub>4</sub>.

## 28. ՊՕՂՈՍԸ ՓԵՄՏՈՍ ՊՈՐԿԻՈՍ ԿՈՒՍԱԿԱԼԻ ՄՈՏ.

(Գործք առ. 25<sub>1</sub>—12):

Փեստոս Պորկիոս կուսակալն իւր պաշտօնը ստանալուց երեք օր յետոյ կեսարիայից գնաց Երուսաղէմ, որպէսզի այն տեղի հանգամանքների հետ ծանօթանայ: Այդ միջոցին քահանայա-

պետը միքանի յայտնի մարդկանց հետ ներկայանալով կուսակալին խնդրեց, որ Պօղոսին Երուսաղէմ բերել տայ, այստեղ կըկին քննութեան ենթարկէ նրան և այդ գործին վերջ տայ: Հրէաների նպատակն էր Պօղոսին Երուսաղէմ բերելու ժամանակ յարձակուել նրա վրայ և ձանապարհին սպանել:

Փեստոսը հրէաների միտքը լաւ հասկանալով ասաց. «Կարիք չկայ Պօղոսին այս տեղ բերել տալու. ես մի քանի օրից յետոյ վերադառնալու եմ կեսարիա, դուք կ'գաք այնտեղ և ես նրա գործը քննելով, մեղաւոր եղած դէպքում կ'պատժեմ»:

Փեստոս կուսակալը 8 կամ 10 օրից յետոյ վերադառնաւ կեսարիա. չ'անցաւ մի քանի օր Պօղոսի հակառակորդներն էլ հաւաքուեցին կեսարիա և զանազան կեղծ ու վնասակար վըկաներ բերելով կուսակալի մօտ աշխատեցին ամեն տեսակ ծանր մեղադրանքներ բարդել առաքեալի վրայ. իսկ Պօղոսը իւր հակառակորդների ամեն մի կեղծ վկայութիւնը կամ ստորցուցմունքները հերքելով ապացուցեց, որ ինքը նչ հրէաների օրէնքի, նչ տաճարի և նչ էլ կայսեր դէմ մի որևէ յանցանք չէ գործել:

Փեստոսը հրէաների մեծամեծներին հաճոյք պատճառելու համար, չ'ցանկացաւ վճիռ տալ և Պօղոսին ասաց. «Քեզ մեղադրում են, որ դու քո հայրենի օրինաց դէմ ես

մեղանչել և տաճարը պղծել։ Դոքա այնպիսի խնդիրներ են, որ հռովմէական օրէնքով չի կարելի վերջնական որոշում տալ. ուստի չէիր կամենայ Երուսաղէմ գնալ և իմ ներկայութեամբ դատուել։

Պօղոսը տեսնելով, որ Փեստոսը ձգտում է հաճոյանալ հրէաներին և քաջութիւն չ'ունի իրա անմեղութիւնը պաշտպանել, ասաց. «Ես գտնուում եմ կայսերական ատեանում և այստեղ էլ կ'կամենայի դատուել. ես հրէաների դէմ ոչ մի անարդար գործ չեմ կատարել. այդ բանն ինքդ էլ լաւ գիտես. ուրեմն ի՞նչ կարիք կայ ինձ Երուսաղէմ ուղարկել։ Եթէ ես մի վնասակար մարդ եմ և մահուան արժանի յանցանք եմ գործել, թող այստեղ դատուեմ և ես մահից չեմ վախենում. իսկ եթէ հակասակորդներիս մեղադըրանքներն անհինն են, այն ժամանակ ոչ ոք իշրաւունք չունի ինձ նոցա ձեռքը յանձնելու. Բացի այդ ես Հռովմայ քաղաքացի եմ և հռովմէական կայսեր բողոքելու իրաւունք ունեմ»։ Պօղոսի այս խօսքերից յետոյ Փեստոս Պորկիոսն իւր խորհրդականների հետ ժողով կազմելով խորհրդակցեց և ապա յայտնեց Պօղոսին. «Երբ դու կայսեր բողոքելու իրաւունք ունես, կարող ես և կայսեր մօտն էլ գնալ»։

«Դատաստանն Աստուծոյ է»։

Ե. Մովս. 1<sub>17</sub>

29. ՊՕՂՈՍԸ ՓԵՍՏՈՍ ԿՈՒՍԱԿԱԼԻ ԵՒ ԱԳՐԻՊ-  
ՊԱՍ ԹԱԳԱՎԱՐԻ ԱՌԱՋ.

(Քործք առ. 25<sub>13—26</sub>):

ա) Փեստոսը աեղեկացնում է Ազրիպասին Պօղոսի մասին. Միքանի օրից յետոյ Հրէից թագաւոր Ագրիպասն իւր Բերենիկէ կնոջ հետ եկաւ կեսարիա ներկայանալու Փեստոս կուսակալին և շնորհաւորելու նրա գալուստը։ Ագրիպաս թագաւորը բաւականին ժամանակ մնաց կեսարիայում, ուստի մի օր Փեստոս կուսակալը Պօղոսի գործի մասին նրան տեղեկութիւն տալու համար ասաց... Փելիքս կուսակալի կառավարելու ժամանակուանից այստեղ մի բանդարկեալ մարդ կայ՝ Պօղոս անունով. Երբ ես Երուսաղէմ գնացի, քահանայապետները, հրէաների գլխաւորները ինձ մօտ գալով խնդրեցին, որ այդ մարդուն դատապարտեմ. Ես յայտնեցի, որ հռովմէական օրէնքով թոյլ է տրւում մեղադրեալին իւր դատախազի բոլոր մեղադրանքերին պատասխանելու. ուստի յայտնեցի նրանց, որ կեսարիա գան գործի քննութեան ժամանակ։ Եւ երբ Երուսաղէմից կեսարիա վերադարձայ, մի քանի օրից յետոյ հրէաներն էլ եկան և ես իսկոյն ատեան կազմեցի։ Ակղբում ես կարծում էի, որ այդ բանդարկեալը կամ մարդասպան է, կամ դմբանենգ, սակայն գործի քննութեան ժամա-

նակ հակառակորդների բոլոր ցուցմունքներից այդ բանը չ'երևաց»:

«Հրէաները Պօղոսին մեղաղրում էին, որպէս թէ իրանց հայրենի օրէնքը չի յարգել տաճարը պղծելէ և մի ոմն մեռած Յիսուսի մասին քարոզում է, որ նա կենդանի է։ Այնուհետեւ ես դժուարացայ այդ խնդիրը քննել. ուստի առաջարկեցի Պօղոսին, որ գնայ Երուսաղէմ և հրէից օրէնքի համաձայն այն տեղ դատուի։ Պօղոսը չ'ցանկացաւ Երուսաղէմ գնալ և որպէս Հոռվմայ քաղաքացի, իրաւունք համարեց կայսեր բողոքելու։ Այժմ ես էլ նրան բանգարկուած պահում եմ, որ կայսեր մօտ ուղարկեմ»։

Այն ժամանակ Ագրիպպասն ասաց Փեստոսին. «Ես ևս կ'կամենայի այդ մարդուն լսել»։ Հետևեալ օրը երբ Ագրիպպասն իւր Բերենիկէ կնոջ, հաղարապետների և քաղաքի պատուաւոր անձանց հետ ատեան եկաւ. Փեստոս կուսակալը հրամայեց Պօղոսին ատեան բերել և ապա դառնալով հանդիսականներին ասաց. «Ո՛վ Ագրիպպաս թագաւոր, և դուք հանդիսականներ. հրէից ժողովուրդը թէ այստեղ և թէ Երուսաղէմում բողոքեց այս մարդու դէմ և ինձ խնդրեց, որ սրան դատապարտեմ։ Ես քննութեան ենթարկեցի այս մարդուն և քննութիւնից պարզուեց, որ այս մարդը մահուան արժանի յանցանք չի գործել։ Վերջը ցանկացայ նրան Երուսաղէմ ուղարկել, որ այն տեղ դատուի, սակայն նա որպէս

Հոռվմայ քաղաքացի, պահանջեց թոյլ տալ իրան կայսեր բողոքելու։ Ես էլ խորհրդականներիս հետ ժողով կազմելով որոշեցինք նրան Հոռվմ ուղարկել։

Այսքանից աւելի ուրիշ յանցանք չ'գիտեմ այդ մարդու մասին, որ կարողանամ կայսեր զըրել. ուստի ես ցանկացայ նրան ձեր առաջը բերել նրա համար, ով Ագրիպպաս թագաւոր, որ դուք վերաքննելով այս մարդու գործերը, ինձ միջոց տաք կայսեր մի բան գրել. այլապէս շատ անմիտ և անյարմար կ'լինի կայսեր մօտ մի յանցաւոր ուղարկել, առանց նախօրօք նրա յանցանքը որոշելու»։

բ) Պօղոսի պաշտպանողական նաով. Ագրիպպաս թագաւորը Փեստոս Պորկիոսի խօսքերը լսելուց յետոյ ասաց Պօղոս առաքեալին. «Այժմ կարող ես քեզ պաշտպանել»։

Պօղոսն ասաց. «Ո՛վ Ագրիպպաս թագաւոր, ես ինձ այսօր երջանիկ եմ զգում, որ ձեր ներկայութեամբ պէտք է պատասխանեմ հրէաների իմ դէմ յարուցած բոլոր մեղաղրանքներին. և որովհետեւ դու աւելի լաւ տեղեակ ես հրէաների կրօնին ու սովորութիւններին, ուստի աւելի ձեռնհաս ես ուղիղ դատաստան անելու. կ'խնդըրէի համբերութեամբ լսել ինձ։ Ես իմ մանկութիւնն անց եմ կացըել Երուսաղէմում և հաւատարիմ լինելով մեր կրօնին, ամենայն եռանդով հալածում էի Նաղովբեցի Յիսուսի հետևողներին։

Քանի մարդկանց հալածել եմ Երուսաղէմում և քանի քանի որբերի բանդարկել. այդ բաւական չ'համարելով ես քահանայապետից իրաւունք ստացայ Դամասկոս գնալ և այն տեղի քրիստոնեաներին էլ հալածել, բայց ճանապարհին երկնքից մի պայծառ լոյս փայլատակեց. ես և իմ ուղեկիցները յանկարծ վայրընկանք և մի ձայն լսեցի, որ ասում էր.—Սաւուզ, Սաւուզ, ի՞նչու ես ինձ հալածում»:—Ես հարցը ի ով ես դու Զայնը պատասխանեց. —«Ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես. վեր կաց. ես կամենում եմ քեզ պաշտօնեայ և վկայ դարձնել այն բանին, ինչ որ դու տեսար. Ես Յիսուսն եմ և ցանկանում եմ քեզ ուղարկել հեթանոսների և հրէաների մէջ քարոզելու, որպէսզի նոցա աչքերը բացուեն և խաւարից դէպի լոյսը դառնան»: —Ես հաւատալով երկնային այդ տեսելքին, սրաով հաւատացի և ճանաչեցի Յիսուսին. այնուհետև սկսեցի նախ Դամասկոսում, յետոյ Երուսաղէմում և ապա հեթանոսների մէջ քարոզել, որ մարդիկ ապաշխարեն և հաւատան Յիսուս Քրիստոսին: Ահա այս խօսքերիս համար հրէաներն ինձ տաճարում բռնեցին և կամենում էին սպանել. սակայն Աստուած ինձ օգնեց և ես մինչև այժմ կենդանի եմ և վկայում եմ թէ մեծերին, թէ փոքրներին այն ամենն ինչ որ Մովսէսը և միւս մարդարէները գուշակել էին, թէ «Յիսուսը պէտք է չարչարուի, թաղուի, յարութիւն առ»

նէ և հեթանոսներին և հրէաներին լոյս քառպէ»:

Պօղոսն երբ իր այս պատասխան ճառը վերջացրեց, Փեստոսը բարձր ձայնով ասաց. «Պօղոս, դու քեզ մոռանում ես և շատ կարդալուց մոլորուել ես»: Պօղոսը պատասխանեց. Ով քաջդ Փեստոս, ես չեմ մոլորուել, այլ ճշմարտութիւնն եմ ասում: «Այդ մասին Ագրիպպաս թագաւորն էլ գիտէ որ ես անկիւններում ծածուկ երբէք չեմ խօսել, այլ ես համարձակօրէն ամեն ճշշմարտութիւն յայտնել եմ և քարոզել հրապարակաւ»: Յետոյ դառնալով դէպի թագաւորն ասաց. «Ով Ագրիպպաս, հաւատում ես մարդարէներին. գիտեմ, որ հաւատում ես»: Այն ժամանակ Ագրիպպասն ասաց Պօղոսին. «Պօղոս, քիչ է մնում, որ ինձ ևս համոզես քրիստոնեայ դառնալու»: Պօղոսն ասաց. «Աստուածանից կ'ինդըրէի, որ ոչ թէ միայն դու, այլև այն բոլոր մարդիկը, որոնք ինձ լսում են, քրիստոնեայ դառնան, բացառութեամբ այս շղթաների, որոնց ես կրում եմ»:

Պօղոսի այս խօսքերից յետոյ Ագրիպպաս թագաւորը, իւր կին Բերենիկէն, Փեստոս կուսակալը և ներկայ եղող բոլոր հրէաները վերկացան գնացին և ճանապարհին միմիանց հետ խօսելիս ասացին. «Այս մարդը մեռնելու կամ կապուելու արժանի ոչ մի գործ չի կատարել»: իսկ Ագրիպպասն ասաց Փեստոսին.—Այս մար-

դուն կարելի էր ազատ արձակել, եթէ նա վա-  
զօրօք կայսեր բողոքած չ'լինէր»:

«Եյլ որպէս ընտրեաց յԱստուծոյ հա-  
ւատարիմ լինել աւետարանին, նոյնպէս և  
խօսիմք, ոչ իրբե մարդկան հաճոյ լինել,  
այլ Աստուծոյ, որ քննէ զսիրսս մեր»:

Ա. Թ. առ. Թես. 24.

«Եւ զխորհուրդն զոր խորհիք խափանէ  
Տէր, զի Աստուծած ընդ մեղ է»:

Ժամագիրք.

### ՅՈՂՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԵՊԻ ՀՌՈՎՄԾ.

(Գործք առ. 27 գլ.):

ա) Պօղոսը ծովի վրայ.—Փեստոս Պորկիոս  
կուսական որոշեց Պօղոսին Հոռվմ ուղարկել.  
այդ պատճառով Պօղոսին մի քանի ուրիշ բան-  
դարկեալների հետ յանձնեց Յուլիոս անունով  
մի հարիւրապետի, որը Սեբաստեան գնդիցն էր:  
Սոքա նաւ նստելով հեռացան Կեսարիայից և  
հետեւեալ օրը հասան Սիրոն: Պօղոսը ճանապար-  
հին գրաւեց հարիւրապետի սիրտը ու հաւատը  
դէպի իրեն և երե նաւը մի քանի օր Սիրոնում  
մնաց, նա հարիւրապետից թոյլտութիւն ստացաւ  
գնալ այցելել այդ տեղի քրիստոնեաններին և նը-  
րանց քարոզել: Յետոյ նոքա Սիրոնից դուրս  
գալով նաւեցին դէպի հիւսիս և Կիպրոս կղզու

հիւսիսային ծայրի մօտով անցան Կելիկիայի և  
Պամֆիլիայի առաջով և հասան Միւռա քաղաքը,  
որը գտնւում էր Լիկիայում: Այդ տեղից նա-  
ւելով շատ նեղութիւններ ու տանջանքներ կրե-  
լով հազիւ հազ հասան Կնիդիայի կողմերը: Թէ  
դոքա ցանկանում էին այդ տեղ ցամաք դուրս  
գալ, սակայն սաստիկ փչող քամին արգելում էր.  
ուստի նոքա փոխանակ դէպի արևմուտք նաւե-  
լու, քամու ոյժով թեքուեցին դէպի հարաւ և  
նաւը հասաւ Կրետէ կղզու Սաղամինա քաղաքը.  
այստեղից էլ նոքա դժուարութեամբ նաւելով  
հասան Գեղեցիկ կոչուած նաւահանգիստը, որը  
մօտ էր Լասսա քաղաքին:

Կեսարիայից դուրս գալուց յետոյ արդէն  
բաւականին ժամանակ էր անցել, աշունն արդէն  
սկսուել էր և յաջող եղանակի սպասելու յոյս էլ  
չ'կար. իսկ առաջ գնալը վտանգաւոր էր դառ-  
նում. ուստի Պօղոսն իւր հետ եկողներին խոր-  
հուրդներ տալով ասում էր. «Ես տեսնում եմ,  
որ մեր նաւագնացութիւնն առանց նեղութեան  
չի վերջանալու. ուստի մենք ոչ թէ բեռների  
կամ նաւի կորստեան երկիւղ պէտք է ունենանք,  
այլ մեր անձի. աւելի լաւ կ'լինի, որ մենք այս  
տեղ մնանք և ձմերենք»:

Բայց որովհետեւ հարիւրապետը նաւի տի-  
րոջը և նաւավարին աւելի էր հաւատում, քան  
Պօղոսին, նրանց հետ խորհուրդ անելով որոշե-  
ցին նաւել Կրետէ կղզու Փիւնիկէ նաւահանգիստը

և այնտեղ ձմեռն անցկացնել։ Փոքր ժամանակից յետոյ վչեց հիւսիսարևելեան քամին և սաստիկ փոթորիկ բարձրանալով նաւն այլես անհնարին եղաւ քամու հակառակ կառավարել. բոլորի յոյսերը կտրուեց և ամեն բան թողին բաղդին։

Ճանապարհորդների երկիւղը և հոգեկան վիճակն այն աստիճան զօրեղացաւ, որ նորա մոռացան նոյն իսկ ուտելը և խմելը։ Միայն Պօղոս առաքեալն էր, որ իրեն հոգուն յատուկ խաղաղութեամբ, առանց երկիւղի նոցա մէջը կանգնելով ասաց. «Եթէ դուք ինձ լսած լինէիք, մենք կրետէից չէինք դուրս գայ և այս նեղութիւններն և չարչարանքները չէինք տեսնի։ Ճիշտ է, այնտեղ լաւ և յարմար ապաստան չէր. բայց և այնպէս կարելի էր ձմեռը մի կերպ պատապարուել։ Անցածն անցել է. այլես չենք կարող վերադարձնել. միայն խնդրում եմ ոչ մի երկիւղ մի կրէք, այլ ընդհակառակը քաջալերուեցէք։ Ես կարծում եմ, որ բացի նաւից մեզ ոչ մէկիս վնաս չի պատահի։ Այս զիշեր Աստծու հրեշտակն ինձ երևաց և ասաց.—«Մի վախենար, Պօղոս, դու կայսեր պէտք է ներկայանաս. ոչ քո և ոչ էլ քեզ հետ եղող մարդկանց կեանքին ոչ մի վտանգ չի պատահի և բոլորէքեան կ'ազատուէք»։—Արդ, քաջալերուեցէք, և ես հաւատացած եմ, որ այդպէս էլ կ'լինի. մենք այս վտանգից ազատուելու ենք և յետոյ դուրս ենք գալու մի կողու վրայ»։

Կրետէ կղզուց դուրս գալու օրուանից արդէն անցել էր 14 օր և նըանք հազիւ հազ մօտեցել էին Աղրիական ծովին։ Մառախուղն այնպէս էր պատել երկինքը, որ ցերեկը ոչ արեգակն էր երկում և ոչ էլ զիշերը աստղերը. նաւավարները կարծում էին թէ ցամաքի հասած կլինին և որպէս զի այդ բանն ստոգեն, արձնի գունդը ծովը ձգեցին և տեսան, որ ծովի խորութիւնը 20 գրկաչափ կամ ձողաչափ է, (որը հաւասար է 120 ոտնաչափի)։ Մի փոքր առաջ նաւելով երկրորդ անգամ չափեցին ծովի խորութիւնը և այս անգամ երևաց, որ 90 ոտնաչափ է։ Այդ բանից երկիւղ կրելով մի գուցէ խորութերի են հանդիպել, որոշեցին նաւի չորս կողմից խարիսխ ձգել և սպասել լոյսի բացուելուն։ Սակայն նաւավարներն երկիւղի սաստկութիւնն ինկատի առնելով կամեցան թողնել նաւը և փախչել. և ահա այդ նպատակով մի մակոյկ իշեցրին ծովը։

Պօղոս առաքեալն այդ բանը նկատելով ասաց հարիւրապետին և զինուորներին. «Եթէ դրանք նաւից հեռանան, նաւը վարող չի լինի և մենք ամենքս էլ կարող ենք վտանգի ենթարկուել»։ Այս ժամանակ զինուորները իսկոյն պարանները կտրելով մակոյկը ծովը ձգեցին։

Դեռ լոյսը չէր բացուել և մթութեան պատճառով ոչ ոք դորձ չէր անում. Պօղոս առաքեալն այդ հանգամանքից օգտուելով յորդորեց ամեն-

քին, որ հաց ուտեն և ասաց. «Ահա 14 օրէ, որ դուք ամօթի էք և ոչինչ չէք կերել. խնդրում եմ ձեզ, նոյնիսկ ձեր ազատութեան համար կերակուր կերէք և ոչ մի երկիւղ մի ունեցէք. Ես ասում եմ, որ ձեզանից ոչ մէկի գըշից մի մազ անգամ չի պակասի»: Այսուհետեւ առաւ հացը, գոհացաւ Աստուածանից և կերաւ. Պօղոսի խօսքերից քաջալերուելով, ամենքն էլ հաց կերան և նաւի մէջ եղած ցորենը ծովը թափեցին որպէսզի նաւը թեթևանայ և իրանք կարողանան մի կերպով ծովի ափը դուրս գալ:

Եւ երբ լոյսը բացուեց, նոքա մի ցամաք տեսան, բայց չգիտէին թէ դա ի՞նչ երկիր է. ուստի մտածեցին նաւը մի որևէ է ձևով ափը հասցնել. իսկոյն խարիսխների պարանները կըտըցին, դեկերի կապերը թուլացրին և առագաստը պարզեցին քամու ուղղութեամբ, որ նաւին դէպի ափը մզէ: Այսպէս նոքա հասան մի տեղ, որի երկու կողմիցն էլ ծով էր, բայց խորը չըլինելով նաւի առաջին մասը խրուեց ծանծաղուտի մէջ. իսկ յետենի մասը կատաղի քամու ալիքներից խորտակուեց: Նաւը բոլորովին կործանուելու վտանգի մէջն էր. զօրականները խորհուրդ արին կապեալներին սպանել, որպէս զի լողալով չփախչեն: Սակայն հարիւրապետը ցանկանալով Պօղոսին պահել և ազատել, զօրականներին թոյլ չտուեց իրանց վատ խորհուրդը կատարել. ուստի հրամայեց լող տուողներին

ջուրն ընկնել և լողալով ցամաք դուրս գալ: Ամենքն էլ իրանց ծովը ձգեցին. լող տուողները ծովի ափը դուրս եկան, իսկ լող չիմացողներն էլ մի փայտի կամ տախտակի կտոր և կամ մի ուրիշ բան բռնած անվտանգ ցամաք դուրս եկան:

«Եթէ Աստուած ի մեր կոյս է, ով իցէ մեր հակառակ»:

Թ. առ. Հոռվմ. 8<sub>31</sub>.

### 31. ՊՕՂՈՍԸ ՄԵԼԻՏԻՆԷ ԿՂՋՈՒ ՎՐԱՅ.

(Գործք առ. 28<sub>1</sub>—<sub>16</sub>).

ա) Պօղոսը ՄԵԼԻՏԻՆԷՆՄ. Երբ նաւի վրայ գտնուողներն անվտանգ ցամաք դուրս եկան, հարց ու փորձ անելով տեղացիներից իմացան, որ այդ ցամաքը ՄԵԼԻՏԻՆԷ կղզին է: (Այժմ Մալտա է կոչւում):

Եղանակը ցուրտ և անձրեային էր. կղզու բարբարոս բնակիչները նոցա սիրով ընդունեցին և կրակ վառեցին, որ տաքանան: Պօղոս առաքեալն էլ խոիւ—(փայտի մանր կտորներ) հաւաքելով կրակի վրայ էր դնում. այդ ժամանակ յանկարծ մի սառած օձ տաքանալով, նրա ձեռքից կախ ընկաւ: Կղզու բնակիչներն այդ բանը նկատելով միմիանց ասացին. «Այս մարդն անպատճառ մարդասպանի մէկն է, որը թէկ խեղ-

դուելուց ազատուեց, բայց արդարութիւնը չըթողեց, որ ապրի»։ Այդ միջոցին առաքեալը ձեռքը թափ տուեց, օձն ընկաւ կրակի մէջ և ոչ մի վաստ չ'տուեց նրան։ Սակայն կղզու բնակիչներն անհամբեր սպասում էին, որ առաքեալի մարմինն օձի թոյնի ազգեցութիւնից կ'ուռչի և յանկարծ վայր ընկնելով կ'մեռնի։ Եւ երբ նոքա տեսան, որ օձի փաթաթուելը ոչ մի վատ հետեանք չունեցաւ, իսկոյն իրանց խօսքերը փոխելով ասացին. «Սա մի աստուած կ'լինի»։

Մալտա կղզու իշխան Պօպիլիոսը սիրով ընդունեց Պօղոս առաքեալին իւր մօտ և երեք օր նրան հիւրասիրեց։ Այդ ժամանակ Պօպիլիոսի հայրը ջերմով հիւանդ պառկած էր. Պօղոսը նրա մօտ գնաց, ձեռքը գլխին դրեց, աղօթք արեց և նրան բժշկեց։

Այս դէպքը զարմացրեց Մալտա կղզու բնակիչներին. նոքա գնացին իրանց հիւանդները բերին և խնդրեցին Պօղոսին, որ նրանց էլ բժշկէ։ Պօղոսը շատերին բժշկելով, արժանացաւ ամենքի յարգանքին. և երբ պատրաստում էին կղզուց հեռանալ, բարբարոս ժողովուրդը նրան մեծամեծ պատիւներ տուեց և ճանապարհի համար անհրաժեշտ պաշար դրեց, որ հացի նեղութիւն չըքաշէ։

բ) Պօղոսը չոռվմի ճանապարհին. Պօղոսի հետ եկողներն երեք ամիս Մալտա կղզու վրայ մնալուց լետոյ, Աղէքսանդրացի մի նաւ տեսան,

որը ձմերել էր այդ կղզու վրայ, նստեցին նրա մէջը և գնացին Սիրակուղա քաղաքը, որը գտնուում էր Սիցիլիա կղզու արևելեան ափում և մի լաւ նաւահանգիստ էր։ Նաւի միջի բեռը դատարկելու համար երեք օր այդ տեղ մնացին և յետոյ նաւելով հասան Հռեգիոն քաղաքը. այդ տեղից էլ յաջողութեամբ նաւելով գնացին հասան Պատիօլիւս քաղաքը։ Այդ տեղի քրիստոնեաները խնդրեցին Պօղոսին, որ մի շաբաթ մնայ իրանց մօտ և քարոզի։ Յուլիոս հարիւրապետը թոյլ տուեց Պօղոսին եօթն օր այդ տեղ մնալ և այնուհետև ճանապարհ ընկան դէպի Հռովմ։

Հռովմի քրիստոնեաներն իմանալով, որ Պօղոս առաքեալն Հռովմ է գալիս, նրան պատիւտալու համար շատերն ընդ առաջ եկան մինչև Ապպիա քաղաքը, իսկ ոմանք էլ եկան հասան մինչև ծովափնեայ երեք կրպակները։

Երբ Պօղոսը տեսաւ այդ մարդկանց, շնորհակալ եղաւ. Աստծուց, որ իւր երեք տարի առաջ զրած թուղթը, Հռովմի հաւատացեալներին սիրոյ և միաբանութեան ողի է ներշնչնել։

Պօղոսը 61 թուին հասաւ Հռովմ։ Յուլիոս հարիւրապետը բոլոր կապեալներին զօրանոց ուղարկեց, իսկ Պօղոսին թոյլ տուեց մի մասնաւոր բնակարան վարձել և զինուորական հակոռութեան տակ ապրել։

«Տէր Աստուած ամենակալ. արդար և ճշմարիտ են ճանապարհ քո»  
Յայտն. Յովհ. 15<sub>3</sub>.

## 32. ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ ՀՐՈՎՄՈՒՄ.

(Գործը առ. 28<sub>17</sub>—32).

ա) Պօղոսը խօսում՝ է Հռովմում՝ հրէաների հետ. Երբ Պօղոսը Հռովմ հասաւ, երեք օրից յետոյ այնտեղի հրէաների մէջ գտնուող բոլոր յայրընի մարդկանց իւր մօտ կանչելով ասաց. «Սիրելի եղբայրներ, ես ոչ մեր ժողովրդի և ոչ էլ հայրենի օրէնքների հակառակ գործ եմ կատարել Երուսաղէմում. սակայն իմ հայրենակիցները ինձ բռնեցին և հոռվմայեցիների ձեռքը մատնեցին։ Ինչպէս Փելիքսը, այնպէս էլ նրա յաջորդ Փեստոս Պորկիոս կուսակաները հարց ու փորձի ենթարկեցին ինձ, տեսան որ ես մահուան արժանի մեղք չեմ գործել, ուստի կամեցան ինձ արձակել. սակայն հրէաները բողոքեցին դրա դէմ և կամենում էին նորոգել իմ դատը. տանել Երուսաղէմ և ինձ կրկին հարց ու փորձի ենթարկել։ Ես չէի կարող լոել. ուստի ստիպուած եղայ կայսեր բողոքել և ոչ թէ իմ ազգի վրայ չարախօսել։ Բայց կարող են այնպիսի մարդիկ լինել, որոնք կ'աշխատեն ձեր մտքերը պղտորել և արատ դնել իմ հայրենասիրութեան վրայ, այդ պատճառով ես ձեզ ինձ մօտ կանչեցի, որ ձեզ հետ խօսեմ. և եթէ դուք ինձ կ'հաւատաք, ես իմ դատի մանրամասնութեան հետ ձեզ կ'ծանօթացնեմ, որ ես այժմ իսրայէլի յուսոյ համար

եմ այս շղթան կրում»։ Պօղոսի այս խօսքերից յետոյ հրէաներն ասացին. «Թո մասին մենք Հրէաստանից ոչ թուղթ ենք ստացել և ոչ էլ մեր հրէայ եղբայրներից մէկն եկել է և քո մասին մի որևէ վատ կամ չար բան մեզ պատմել։ Թո բռնած գիրքը գէպի հրէութիւնը մեզ շատ է հետաքրքրում. ուստի լսելով, որ դու պատկանում ես Նազովրեցի Յիսուսի աղանդին, մենք սիրով կ'կամենայինք իմանալ թէ դու ի՞նչ նըսպատակներ ունես և ի՞նչ սկզբունքների ես հետեւում»։

Պօղոս առաքեալը սիրով ընդունեց հրէաների առաջարկութիւնը և որոշեց մի օր այդ խընդուի մասին խօսել։

Մի քանի օրից յետոյ հրէաները հաւաքուեցին Պօղոսի մօտ։ Սա մանրամասն պատմեց նըրանց Աստուծոյ թագաւորութեան և խաչուած Յիսուսի մասին։ Պօղոսը մարգարէներից և Մովսիսից վկայութիւններ բերելով աշխատեց հրէաներին համոզել, որ Յիսուսը հրէաների սպասած Մեսիան — Քրիստոսն է։

Լսողներից ոմանք հաւատացին Պօղոս առաքեալի խօսքերին, իսկ ոմանք էլ ոչ։

Ունկնդիրների մէջ անհամաձայնութիւնն այն աստիճան սաստկացաւ, որ առաքեալի քարոզութեան հաւատացողներին անկարելի եղաւ քրիստոնեայ դառնալ. և Պօղոսը հեռանալու ժամանակ սասաց հետեւեալ յանդիմանական խօսքե-

բը. «Առւրբ Հոգին եսայի մարզարէի բերանով  
մեր հայրերի հետ խօսելիս ասաց. — «Գնան, ժո-  
ղովրդին ասա. դուք ձեր ականջներով կ'լսէք,  
բայց չէք հասկանայ, ձեր աշքերով կ'տեսնէք,  
բայց չէք ճանաչի, որովհետև ձեր սիրալ թանձը-  
րացել է: Եթէ նոքա սրտով հաւատան, զղան  
իրանց մեղքերը և յեր գառնան, ես նրանց կ'ը-  
բժշկեմ»: — «Արդ, յայտնում եմ ձեզ, որ Աս-  
տուծոյ փրկութիւնը հեթանոսների համար ու-  
ղարկուեցաւ և նոքա կ'լսեն»:

Այս խօսքերից յետոյ հրէաները թողին Պօ-  
ղոսին և հեռացան: Պօղոսի դատավարութիւնը  
բաւականին երկարեց և նա ստիպուած եղաւ մի  
սենեակ վարձել և երկու տարի այն տեղ ապրել:  
Եւ այդքան ժամանակամիջոցում իւր մօտ զնա-  
ցող եկողներին սիրով քարոզում էր Աստուծոյ  
արքայութեան գաղափարները և ուսուցանում էր  
Յիսուս Քրիստոսի մասին: Այսպիսով վերջանում  
է Պօղոս առաքեալի պատմութիւնը և նրա վեր-  
ջին ճակատագրի մասին «Գործք Առաքելոցը»  
ոչ մի տեղեկութիւն չի տալիս:

Ենթադրում է, որ նա Ներոն կայսեր ժա-  
մանակ 64 թուին նահատակուել է Հռովմում:

Ը) Մի քանի խօսք Պօղոս առաքեալի վերջին  
ճակատագրի մասին. Մի հին աւանդութիւն էլ  
կայ այդ մասին, որ ասում է. «Պօղոս առա-  
քեան իւր առաջին բանդարկութիւնից ազատ-

ուելուց յետոյ կըկին առաքելական մի կարճ ճանա-  
պարհորդութիւն է կատարել դէպի Հռովմ, ուր  
երկրորդ անգամ բանդարկուելով ազատ է ար-  
ձակուել և այդպիսով թողել է Հռովմը և գնա-  
ցել մինչև իսպանիա:

«Եբ հաւատարիմ մինչև ի մահ, և  
տաց քեզ զպսակն կենաց»:

Յայտն. Յովհ. 2<sub>10</sub>.

«Զի զամենայն, որ յԱստուծոյ ծնեալ  
է՝ յաղթէ աշխարհի. և այս է յաղթսւթիւնն,  
որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»:

Ա. Թուղթ Յովհ. 5<sub>4</sub>.

## ԵՐՈՌԴ ՄԱՍ.

33. Մի ՔԱՆԻ ԽՕՍՔ ԷԼ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՄԻՒՄ  
ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Յիսուս Քրիստոսի համբարձումից յետոյ առաքեալները մնացին Երուսաղէմում որպէս զի աւելի ամրանան իրանց հաւատի մէջ. և ապա միմիանցից բաժանուելով գնացին հոռվմէական կայսրութեան զանազան երկրները ու քաջարար քարոզեցին Քրիստոսի վարդապետութիւնը:

Այսպէս ա) Սիմօն-Պետրոս. Սա Քրիստոսի ամենաաւագ աշակերտն էր, որ Գենէսարէթ լճի ափին ձուկ էր որսում, երբ Յիսուս իւր մօտն հրաւիրելով ասաց. «Պետրոս, ես քեզ ցանկանում եմ մարդկանց որսորդ դարձնել»:

Յիսուսից յետոյ Պետրոս առաքեալը նրա վարդապետութիւնը քարոզել է փոքր Ասիայում ցըռուած հրէաների մէջ և այնտեղից յետոյ անցել է Եփրատի ու Բարելոնի կողմերը, ուր այդ ժամանակ կային բազմաթիւ հրէաներ, որոնք հեռացած լինելով մայր հողից, մշտապէս ապրում էին այդ կողմերը:

Աւանդութիւնն ասում է, որ Պետրոս առաքեալն իւր կեանքի վերջին օրերում գնացել է Հոռվմ և 64 կամ 67 թուին Ներոն կայսեր օրով քրիստոնեաների մեծ հալածանքի ժամանակ խաչի վրայ նահատակուել է.

բ) Յակովոս Մէծը եղել է Յովհաննէս առաքեալի եղբայրը և բոլոր առաքեալներից առաջ մարտիրոսական մահով վախճանուել է: Մրան Հերովդէս Ագրիպպաս առաջինը իւր մօտ կանչելով սրով սպանել է տուել ուրիշների հետ 44 թուին: (Գործք առ. 12 գլ. 1—2) Հերովդէսը տեսնելով, որ այդ դէպքը շատ հաճելի է դառնում հրէաների համար, ուրախացած բաղարջակերաց տօնի ժամանակ բռնել է տալիս Պետրոս առաքեալին և նոյնպէս բանդարկում է:

գ) Յակովոս Արդար. . . . Պետրոս առաքեալի հետ միաժամանակ Յակովոս Տեառն եղբայրը Երուսաղէմի քրիստոնեայ համայնքի մէջ համարւում էր իբրև առաջնակարգ մարդ, որը իւր արդար վերաբերմունքով դէպի հրէից օրէնքները և իւր բարութեան ու ճշմարիտ հայեացքների համար անուանուել է Արդար:

Երբ Պօղոս առաքեալին հրէաները բռնած տանում էին հոռվմէական կուսակալի մօտ, Յակովոսի թշնամիները իրանց բռնութիւններն աւելի սաստկացրին դէպի առաքեալը:

Աւանդութիւնն ասում է. «Նրան բռնում

տանում են տաճար ու ստիպում են, որ ուրանայ քրիստոնէութիւնը. սակայն նա հաստապէս պաշտպանում է իւր դաւանանքի վէհութիւնն ու սրբութիւնը: Թշնամիները կատաղած Յակովը առաքեալին տաճարից ներքե են ձգում. նա դեռ հոգին չ'աւանդած մեծահոգութեամբ աղօթում է իւր հակառակորդների համար: Այդ ժամանակ հրէաներից մէկը մօտենալով նահատակել է տալիս նրան 64 թուին:

η) Յովհաննէս առաքեալ: Սա 66 և կամ 70 թուին հրէական պատերազմի ժամանակ գնացել է Փոքր Ասիա Պողոս առաքեալի կազմած քրիստոնեայ համայնքների մէջ քարոզելու և քսան տարուց աւելի սիրով քարոզել է Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը թէ Եփեսոսում և թէ Փոքր Ասիայի միւս քաղաքներում, մինչև Դոմիտեան կայսեր ժամանակ, որը բոնում է նրան և կապած աքսորում է Պատմոս անմարդաբնակ կղզին: (Այդ կղզին գտնում էր Փոքր Ասիայի հարաւարևմտեան կողմում):

Դոմիտեան կայսեր մահուանից յետոյ 96 թուին Յովհաննէս առաքեալն աքսորից վերադառնում է Եփեսոս և Երկար տարիներ իբրև ճշմարիտ հայր, իւր հայրական ոյժը գործ է դնում այդ տեղի ժողովրդի վրկութեան համար: Աւանդութիւնն ասում է. «Սա առաքեալների մէջ միակն է եղել, որ մեռել է իւր բնական մահով»: Յովհաննէս առաքեալի մասին կան քրիստո-

նէական շատ աւանդութիւններ, որոնք նրա մեծութիւնն են ցոյց տալիս: Այդ աւանդութիւններից մէկն ասում է. «Մի անգամ երբ Յովհաննէս առաքեալը քրիստոնէական մի համայնքի այցելեց, այնտեղ տեսաւ մի առողջ կազմուածքի և գեղեցիկ ու դուրեկան դէմքի տէր մի պատանու. դառնում է այդ համայնքի առաջնորդին և ասում է.—Ես այս պատանուն քեզ եմ յանձնում»: -Համայնքի առաջնորդը այդ պատանուն իւր մօտ տարաւ, խնամեց, ուշը դարձրեց և աշխատեց նրան քրիստոնէական ճշմարիտ ոգով կրթել: Այդ պատանին երբ մեծացաւ, ընկաւ վատ ընկերների շրջանում և աւազակ դարձաւ:

Քիչ ժամանակից յետոյ երբ Յովհաննէս առաքեալը կրկին եկաւ նոյն համայնքի մօտ և նրա առաջնորդից պահանջեց յիշեալ պատանուն, առաջնորդն արտասուքն աչքերին ասաց. —Նա մեռել է»: Յովհաննէսը զարմացած հարցնում է. —Ե՞րբ և ի՞նչ մահով վախճանուեց», առաջնորդը պատասխանում է. --Նա Աստուծոյ առաջն է մեռել. նա այժմ մի փշացած մարդ է գարձել և տւազակութեամբ է պարապում»: Յովհաննէս առաքեալը սրտով ցանկանում է այդ պատանուն տեսնել, և երբ Երկար որոնելուց յետոյ գտնում են, բերում են առաքեալի մօտ, նա ամաչում և իսկոյն փախչում է: Յովհաննէս առաքեալն այս բանը նկատելով ասում է. —Որդեակ, ի՞նչու ես

փախում ինձանից, քո հօրից. դու դեռ կարող ես փրկուել, հաւատա՞ Յիսուս Քրիստոսին, զըդ-ջայ մեղքերդ ու դու կ'փրկուես. ինձ Յիսուս Քրիստոսն է այստեղ ուղարկել»: Պատանին սառած մնալով անկարող է լինում առաքեալի երեսին նայել. աշքերը գետնին ձգած սկսում է դառնապէս լաց լինել:

Յովհաննէս առաքեալը նրան գրկած տառում է քրիստոնեայ համայնքի մէջ: Պատանին զղջում է իւր մեղքերը, հեռանում է իւր չար և վատ գործերից և իրեւ նոր ճնուած դառնում է ճշմարիտ քրիստոնեայ»:

Մի ուրիշ աւանդութիւն էլ պատմում է. «Երբ Յովհաննէս առաքեալը ծերացել էր և հազիւ հազ կարողանում էր դողդողալով խօսել, մի օր իւր շուրջը հաւաքուած հաւատացեալ քրիստոնեաներին ասաց. «Որդեակք, սիրեցէք միմիանց». Այն ժամանակ նրա աշակերտները հարցնում են.—ինչու համար է մեզ այդ բանը հարկաւոր»: Յովհաննէս առաքեալը պատասխանում է. «Եղբայրների սիրելն է ամենամեծ պատուիրանը»:

Ե) Մնացած առաքեալները: Քրիստոսի մնացած առաքեալների կեանքից և նոցա կատարած դործերից շատ տեղեկութիւններ պակասում են: Նոցա մասին այս քանը կարելի միայն ասել, որ բոլորն էլ հարկաւ հաւատարիմ մնալով իրանց Մեծ Ուսուցչի պատուէրին, գնացել են աշխարհիս այլեայլ կողմերը և քարոզել են նրա վար-

դապետութիւնը. սակայն այդ մասին պատմութիւնն այսօր ոչինչ չի ասում: Աւանդութիւնից միայն այս քանն է իմացւում, որ Անդրէաս առաքեալը եղել է այժմեան Ծուսաստանի կողմերը, Փիլիպպոսը Փոխոգիայի կողմերը, Բարդուղիմէոսը եղել է Հայաստանում, Թովմասը Հնդկաստանի կողմերը, Մատթէոսը Եթովպիայի և Սիմոն Կանանացին Մեսապօտօմիայի (Միջագետքի) կողմերը:

Գոյզութիւն ունեցող բոլոր աւանդութիւնները և քրիստոնէական ամենահին տեղեկութիւնները միաձայն վկայում են, որ Քրիստոսի բոլոր տշակերտները նահատակուել են իրանց առաքելական գործունէութեան ժամանակ:

«Երանի՛, որ հալածեալ իցեն վասն արդարութեան. զի նոցա է արքայութիւն երկնից»:

Մատթ. 5<sub>10</sub>.

«Հովիւր քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Յովհ. 10<sub>11</sub>.

«Երանի՛ մեռելոց, որք ի Տէր հանգեան»:

Յայտն Յովհ. 14<sub>13</sub>.

## ՅԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵՐՆ.

---

- 33 թուին կատարուեց Հոգեգալստեան առաջին  
տօնը.  
36 թ. Ս. Ստեփանոսի նահատակութիւնը.  
37 կամ 38 թ. Պողոսի դարձը.  
43 կամ 44 թ. Յակովոս Մեծի մահը.  
45—48 թ. Պողոսի առաքելական առաջին ճա-  
նապարհորդութիւնը.  
50 թ. Երուսաղէմում կայացաւ առաքելական  
առաջին ժողովը.  
51—54 թ. Տեղի ունեցաւ Պողոս առաքեալի  
երկրորդ ճանապարհորդութիւնը.  
55—58 թ. Տեղի ունեցաւ Պողոս առաքեալի  
երրորդ ճանապարհորդութիւնը.  
58—60 թ. Պողոսը որպէս բանդարկեալ կեսար-  
իայում.  
62 թ. Պողոսը որպէս բանդարկեալ Հոռվմում.  
63 թ. Յակովոս Տեառն եղբօր մահը.  
64 թ. Քրիստոնեաների հալածանքը Հոռվմում.


- 64 կամ 67 թ. Պողոսի և Պետրոսի նահատա-  
կութիւնը.  
70 թ. Երուսաղէմի կործանումը Տիտոսի ձեռ-  
քով.  
100 թ. Յովհաննէս առաքեալի մահը.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ.



	Երես
1. Յիսուս Քրիստոսի Համբարձումը.	5
2. Մատաթիայի ընտրութիւնը.	7
3. Ս. Հոգու գալուստը.	8
4. Պետրոս առաքեալի կատարած առաջին հրաշքը.	11
5. Հալածանք առաքեալների դէմ.	13
6. Անանիա և Սափիրա.	16
7. Առաքեալները բարձրագոյն ատեանում.	18
8. Եօթը սարկաւագների ընտրութիւնը.	22
9. Ս. Ստեփանոսի քարոզը և մարտիրո- սական մահը.	24
10. Փիլիպոսը և Եթովպացի ներքինին.	26
11. Պողոսի դարձը.	29
12. Պողոսը Դամասկոսում և Երուսաղէմում.	32
13. Կոռնելիոս հարիւրապետը.	34
14. Առաջին քրիստոնէական համայնքն Ան- տիոքում.	38
15. Յակովոս առաքեալի մահը և Պետրո- սի ազատութիւնը.	40
16. Պողոսի առաքելական առաջին ճանա- պարհորդութիւնը.	42

17. Շարունակութիւն և վերջ առաքելական առաջին ճանապարհորդութեան.	47
18. Առաքելական առաջին ժողովն Երուսա- լէմում.	50
19. Պողոսի առաքելական Երկրորդ ճանա- պարհորդութիւնը.	54
20. Պողոսը Թեսաղոնիկէում և Բերիայում.	59
21. Պողոսն Աթէնքում.	62
22. Պողոսը Կորնթոսում.	64
23. Պողոսի առաքելական Երրորդ ճանա- պարհորդութիւնը. Պողոս առաքեալն Եփեսոսում.	67
24. Պողոսը Միլետում.	72
25. Պողոսի Վերադարձը Միլետից դէպի Ե- րուսաղէմ.	74
26. Պողոս առաքեալն Երուսաղէմում.	76
27. Պողոսը Փելիքս կուսակալի մօտ.	84
28. Պողոսը Փեստոս Պորկիոս կուսակալի մօտ.	90
29. Պողոսը Փեստոս կուսակալի և Ազրիպ- պաս թագաւորի առաջ.	93
30. Պողոսի ճանապարհորդութիւնը դէպի Հռովմ.	98
31. Պողոսը Մելիտինէ կղզու վրայ.	103
32. Պողոսը Հռովմում.	106

33. Մի քանի խօսք Պետրոսի և միւս առա-  
քեալների մասին . . . . . 110  
34. Յանկ ժամանակագրութեան. . . . . 116  
35. Յանկ բովանդակութեան. . . . . 118







32

1063

0028069

1063



